

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՓՈՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՍԸՆԴՀԱՆՈՒՐ
ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՆԱԽԱԲԱՆ

2009-2011 թվականից «Հուլյսի կամուրջ» ՀԿ-ն «Առաքելություն Արևելք» դանիական միջազգային կազմակերպության հետ համատեղ սկսեց իրականացնել «Ապրել միասին, սովորել միասին» ծրագիրը, որի նպատակն էր նպաստել ներառական կրթության միջոցով հաշմանդամություն ունեցող երեխաների որակյալ կրթություն ստանալու իրավունքի իրացմանը: Այդ նպատակին հասնելու համար ծրագիրը առաջարկում էր գործուն մեխանիզմների ստեղծում մեկ մարզի մակարդակում, որոնց միջոցով հնարավոր կլիներ հասնել ցանկացած երեխայի, այդ թվում հաշմանդամություն և այլ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հանրակրթական համակարգ համընդհանուր ներառմանը: «Ապրել միասին, սովորել միասին» ծրագիրը իրականացվեց «Հուլյսի կամուրջ» ՀԿ-ի, «Առաքելություն Արևելք» դանիական միջազգային կազմակերպության, ՀՀ Տավուշի մարզպետարանի և ՀՀ ԿԳՆ-ի միջև կնքված փոխըմբռման հուշագրի հիման վրա:

Այսպիսով «Ապրել միասին, սովորել միասին» ծրագիրը պաշտոնապես ճանաչվեց որպես մեկ մարզի մակարդակում համընդհանուր ներառական կրթական համակարգի ներդրման փորձնական ծրագիր, որի արդյունքերի հիման վրա Հայաստանի Հանրապետություն մշակվեցին և ընդունվեցին համընդհանուր ներառական կրթության համակարգի անցման համար անհրաժեշտ մի շարք փաստաթղթեր.

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հուլիսի 10-ի N 1088-Ն որոշմամբ հաստատվեց հանրակրթության պետական մեկ ընդհանուր չափորոշիչ բոլոր սովորողների համար: Ըստ այդ փաստաթղթի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը արդյունավետ կազմակերպելու նպատակով հանրակրթության ծրագրի բովանդակությունը հարմարեցվում է նրանց ընկալման և մտավոր գործունեության կարողություններին:
- ՀՀ կառավարության 2011 հունվարի 27-ի N 46-Ն որոշմամբ «Հուլյսի կամուրջ» ՀԿ-ի և դանիական «Առաքելություն Արևելք» միջազգային կազմակերպության հետ համատեղ Տավուշի մարզում միջև 2017թ. հունվարի 1-ը իրականացվեց հանրակրթության համակարգում համընդհանուր ներառման ծրագիր, և ներդրվեց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգը:
- Մշակվեց «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (հատատված՝ 01.12.1014թ. ԱԺ 200-Ն որոշմամբ), որով նախատեսվում էր հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության՝ կիրառելով երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ:

Փուլ առաջին (2001 – 2011թթ.)`

1. Առաջին քայլերը օրենսդրության մեջ

Դժվար է ասել, թե Հայաստանում ինչպիսի զարգացում կունենար կրթության հավասար հնարավորությունների ապահովման միջազգային օրակարգը, եթե չլիներ քաղաքացիական հասարակության ինստիտուտների առաջադիմական նախաձեռնողականությունը:

1999թ. ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքը հնարավորություն ընձեռեց՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման վերաբերյալ ամրագրված դրույթների իրականացման նպատակով 2001 թվականին հանրապետությունում ներդնել ներառական կրթության ծրագիրը:

«Հուլիսի կամուրջ» հասարակական կազմակերպությունը դարձավ ներառական կրթության գաղափարի ու հետագա զարգացումների շարժիչ ուժը: 2001 թվականին «Հուլիսի կամուրջ» ՀԿ-ն, ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ, ստորագրեց Փոխըմբռնման հուշագիր: Սկսելով Երևանի Դ.Դեմիրճյանի անվ. թիվ 27 դպրոցից և հետագայում ընդգրկելով ևս 5 դպրոց, հնարավոր եղավ պատկերացում կազմել ու շոշափելիորեն գնահատել՝ հանրակրթական ընդհանուր դպրոցում հաշմանդամություն ունեցող երեխայի կրթության կազմակերպման, շփման, սոցիալականացման և հարմարեցման հնարավորությունների ու դրա հետ կապված դժվարությունների մասին, հասկանալ գործողություններն ու երկարատև ճանապարհի իրատեսականությունը:

Հավասար կրթության ապահովմանն ուղղված առաջնային ջանքերը ուղղված էին առողջական վիճակի հիմքով հաշմանդամ ճանաչված երեխաներին ընդհանուր հիմունքներով կրթության մեջ ընդգրկելու խնդրի լուծմանը: Դա նախ և առաջ վերաբերմունքի փոփոխության ու կարծրատիպերի վերացման գործընթաց էր:

Երևան քաղաքում ընթացող փորձարարական ծրագրերը հիմք տվեցին օրենսդրական բարեփոխումների¹, որով ամրագրվեց պետական քաղաքականության հետևյալ սկզբունքը. «Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով»:

¹ տես «Կրթության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքը (25.05.05թ., (ՀՕ-137-Ն) և «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» (ընդ. 25.05.05թ., ուժը կորցրել է 03.01.2015թ-ին)

2005 թվականին ընդունվեց «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը, որը օրենսդրորեն ամրագրեց «ներառական կրթություն»² հասկացությունը, որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի³ կրթության կազմակերպման ձև:

Մոտեցումն այն էր, որ բոլոր երեխաները պետք է սովորեն համատեղ բոլոր այն դեպքերում, երբ դա հնարավոր է՝ անկախ որևէ դժվարությունից կամ նրանց միջև առկա տարբերություններից: Այսինքն, հասարակությունից առանձնացված հատուկ դպրոցում կրթություն ստացող հաշմանդամություն ունեցող երեխան բնորոշվում էր ընդհանուր հանրակրթական դպրոցում սովորող կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող երեխա:

Ամրագրվեց նաև հաշմանդամություն ունեցող երեխայի կրթությունը կազմակերպելու և կրթության մեջ նրանց ընդգրկվածությունը մեծացնելու այլընտրանքային տարբերակներ. ծնողների ընտրությամբ երեխան կարող է կրթություն ստանալ հատուկ կրթական հաստատությունում⁴, ընդհանուր հանրակրթական դպրոցում՝ ներառական կրթության ձևով և տնային ուսուցման⁵ միջոցով՝ տանը կամ բուժական հաստատություններում (երկարատև ստացիոնար բուժման դեպքում):

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող էին համարվում այն երեխաները⁶, ովքեր ունեն՝

ա) խոսքի ծանր խանգարումներ, հնչյունահնչույթային եւ խոսքի ընդհանուր թերզարգացում.

բ) լսողության խանգարում՝ չլսող (խուլ), թույլ լսող եւ լսողության կորուստ.

գ) տեսողության խանգարում՝ կույր, թույլ տեսնող, ուշ կուրացած, շլություն.

² տես «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի 1-ին հոդվածը. «**ներառական կրթություն**՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության համար առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով նրանց համատեղ ուսուցումը հանրակրթական եւ մասնագիտական ուսումնական հաստատություններում նման պայմանների կարիք չունեցող անձանց հետ.

³ տես «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի 1-ին հոդվածը. «**կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ**՝ անձ, որի ֆիզիկական եւ (կամ) մտավոր, հոգեկան զարգացման առանձնահատկությունները խոչընդոտում են կրթական ծրագրերի յուրացմանը՝ առանց կրթության առանձնահատուկ պայմանների .»

⁴ տես «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի 1-ին հոդվածը **հատուկ կրթական հաստատություն**՝ կազմակերպություն, որը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար իրականացնում է կրթական ծրագրեր՝ կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման միջոցով.

⁵ տես «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի 1-ին հոդվածը **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց տնային ուսուցում**՝ առողջական վիճակի պատճառով ժամանակավորապես կամ մշտապես ուսումնական հաստատություն չհաճախող կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի համար համապատասխան ուսումնական հաստատության մանկավարժների կողմից տվյալ անձի տանն իրականացվող հանրակրթական եւ մասնագիտական կրթական ծրագրերի ուսուցման կազմակերպում.

⁶ Տես «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքի 5-րդ հոդված,

դ) մտավոր հետամնացություն.

ե) հենաշարժական համակարգի խախտումներ.

զ) հոգեբանական զարգացման խնդիրներ՝ ուսումնական ունակությունների զարգացման յուրահատուկ խանգարումներ.

է) վարքային եւ հուզականային ոլորտի խանգարումներ:

Վերոնշյալ ցանկից տեսանելի է դառնում, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները հիմնականում հաշմանդամություն ունեցող անձինք ենք, որոնց կրթության կազմակերպման համար, մինչ ներառական կրթության ուղղված օրենսդրական բարեփոխումները, հիմք էր հանդիսանում ՀՀ ԱՍՆ բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի եզրակացությունը, որն առավել սահմանափակումներ առաջացնող փաստաթուղթ էր, քան կրթության միջոցով վերականգնման ու սոցիալականացման տանող ուղեցույց: Դրա հիմքը անձի առողջական վիճակով պայմանավորված բժշկական ախտորոշումն էր:

Հաշմանդամության նկատմամբ վերաբերմունքի հիմնարար փոփոխություններից մեկը բժշկական մոդելից սոցիալական մոդելի անցումն է: Դրանցից մեկը երեխայի կրթության մատչելիության և լիարժեք մասնակցության համար խոչընդոտ կամ սահմանափակող գործոն համարվող պատճառի, բացակա միջոցի կամ պայմանի բացահայտումն է, և դրանց առավելագույն ապահովման միջոցով երեխայի մասնակցային հնարավորությունների մեծացումը:

2. Առաջարկվող ծառայությունները

Ներառական կրթության իրականացմանը ուղղված ծառայությունները կարելի էր բաժանել երկու հիմնական խմբերի.

1. Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնների կողմից ապահովվող,
2. Ներառական դպրոցում իրականացվող կամ դպրոցին ուղղված ծառայություններ:

Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնները՝

ա) սահմանում էին երեխաների զարգացման առանձնահատկությունների առավել վաղ շրջանում բացահայտման, գնահատման եւ կրթության համար համարժեք պայմանների ապահովման հիմքերը.

բ) կազմում էին համապատասխան եզրակացություն՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության համար համարժեք պայմանների վերաբերյալ.

գ) մատուցում էին խորհրդատվություն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ծնողներին (այլ օրինական ներկայացուցիչներին).

դ) մատուցում էին խորհրդատվություն մանկավարժության, առողջապահության և սոցիալական ոլորտների աշխատակիցներին՝ երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների ապահովման և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կամ նրանց ծնողների (այլ օրինական ներկայացուցիչների) իրավունքների վերաբերյալ.

ե) ձեռավորում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վերաբերյալ տվյալների բազա և օրենքով սահմանված կարգով այն տրամադրում համապատասխան շահագրգիռ կազմակերպություններին:

Ներառական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուղղված հիմնական ծառայություն նրանց զարգացման առանձնահատկություններին և տարիքին համապատասխան կրթություն կազմակերպելն էր: Դրա համար հիմք էր ընդունվում հանրակրթական պետական չափորոշիչը և ծրագրերը, սակայն դրա յուրացման անհնարինության կամ դժվարության դեպքում՝ նաև հատուկ կրթության չափորոշիչներով և ծրագրերով:

Այսինքն ԿԱՊԿՈՒ անձի համար կարող էր կիրառվել երկու պետական չափորոշիչ և ծրագիր: Երեխայի ուսումնական բեռնվածության ծավալը և կրթական ծրագրի պարտադիր նվազագույնը ապահովում էր դպրոցը՝ ըստ անհրաժեշտության և բազմամասնագիտական թիմի: Ի դեպ երեխայի ծնողը կարող էր մասնակցել երեխայի անհատական ծրագրի կազմմանը, ինչպես նաև ստանալ խորհրդատվություն իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով:

ԿԱՊԿՈՒ անձանց տրամադրվող մասնագիտացված հիմնական ծառայությունը համարվում էր հատուկ մանկավարժական օգնություն, որը կարող էր կազմակերպվել դպրոցում հաստիքագրված հատուկ մանկավարժի և (կամ) վերականգնողական կենտրոններում և համայնքներում հատուկ մանկավարժական ծառայություններ կազմակերպելու միջոցով:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխային ուղղված ծառայությունների հիմքում շարունակվում էր պահպանվել բժշկական և սոցիալական մոտեցումները: Այսպես օրինակ,

- կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետպատվերի շրջանակում երեխան իրավունք ուներ բժշկական ստուգման և բժշկահոգեբանամանկավարժական գնահատման,
- հատուկ և ներառական դպրոցներում ԿԱՊԿՈՒ երեխային տրամադրվում էր սնունդ,
- ներառական դպրոցը կազմակերպում էր ԿԱՊԿՈՒ սովորողների փոխադրման ծառայությունը:

3. Ներառական կրթության գործընթացի մասնակիցները և իրավական դաշտի կանոնակարգումը

Ներառական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացը ապահովում էին մանկավարժական աշխատողները, որոնց կազմում առանձնակի կարևորություն ուներ բազմամասնագիտական թիմը՝ բաղկացած հատուկ մանկավարժներից, հոգեբանից, սոցիալական մանկավարժից և թիմի աշխատանքները համակարգողից (միջինում՝ 4-5 մանկավարժական աշխատող): Նրանց

աշխատանքի վարձատրությունը հաշվարկվում էր արտոնյալ պայմաններով, համապատասխան գործակցի կիրառումով՝ տվյալ տարված պետական բյուջի շրջանակում:

Բազմամասնագիտական թիմը կրթական, սոցիալական, հոգեբանական և առողջապահական ծառայություններ էր մատուցում նաև դպրոցի մյուս աշակերտներին:

Վերոնշյալ աշխատանքներին զուգահեռ, ներառական *կրթության* կազմակերպման ծրագրով վերապատրաստումներ էր կազմակերպվել ներառական բոլոր դպրոցների տարրական և միջին դասարաններում դասավանդող ուսուցիչների և այլ աշխատող մանկավարժական աշխատողների համար:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող բազմամասնագիտական թիմի համագործակցությունը դպրոցի մանկավարժական մյուս աշխատողների (ուսուցիչների) հետ ժամանակի ընթացքում դրականորեն վերափոխել էր թիմի տեխնիկական գործառնությունները, նրան վերածելով բազմապրոֆիլ, յուրաքանչյուր սովորողի համար անհատականացված ծառայություններ մատուցող ուսուցչի օգնականի ինստիտուտի: Այս հեռանկարը յուրաքանչյուր (այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող) սովորողի անհատականացված կրթական կարիքի սպասարկման այն հնարավորությունն էր, որը պետք է նպաստեր ներառական կրթության համատարած կազմակերպմանը:

Երևանի և հատկապես մարզերի ներառական դպրոցներում զգալի էր բարձրագույն կրթության որակավորում ունեցող հատուկ մանկավարժների ընդգրկվածության ցածր մակարդակը և կրթական, սոցիալական հոգեբանական ծառայությունների ապահովումը շատ դեպքերում իրականացվել էր պաշտոնային պարտականություններին համապատասխան մասնագիտական որակավորում չունեցող մանկավարժական կադրերի կողմից:

Կրթության առանձնահատուկ պայմանների մաս կազմող ուսումնամեթոդական նյութերը մշակելու, և երեխայի ուսումնառությունը արդյունավետությամբ կազմակերպելու համար, ՀՀ բարձրագույն կրթության օրենսդրությամբ սահմանվել է մանկավարժական կրթության հիմնական ուսումնական ծրագրերի բովանդակության մեջ հատուկ մանկավարժության հիմունքների պարտադիր նվազագույնի ուսումնասիրությունը ներառելու պահանջը: Մակայն դա մանկավարժական աշխատողների կողմից ԿԱՊԿՈՒ սովորողներին մատուցվող որակյալ ծրագրերի համար բավարար երաշխիք համարվել չէր կարող՝ իր երկարատևության և ճկունության պակասի պատճառով: Հետևաբար պարբերաբար շարունակվում են տարբեր թիրախների համար նախատեսված վերապատրաստումները:

Ներառական կրթության և երեխայի արդյունավետ կրթության կազմակերպման գործում էական նշանակություն ունի նրա առանձնահատկություններով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանների սահմանումը: Այդ նպատակով, ծնողի դիմումի հիման վրա (առանձին դեպքերում՝ կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշման հիման վրա) երեխան կարող էր ներկայացվել բժշկահոգեբանամանկավարժական գնահատման և կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի վկայագրման:

Երեխայի ֆիզիկական, մտավոր եւ (կամ) հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտման և գնահատման, նրանց ընդունակություններին և կարողու-

թյուններին համապատասխան կրթության իրականացման ձևի ընտրության նպատակով ՀՀ ԿԳ նախարարության ենթահամակարգում ստեղծվում է բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնը⁷՝ իր 2 մասնաճյուղերով Ստեփանավանում և Կապանում:

Բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի գնահատման արդյունքների վերաբերյալ եզրակացության հիման վրա տարածքային կառավարման պետական մարմինը վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը, որը հիմք է երեխայի կրթության ուսումնական հաստատությունն ընտրելու համար:

Իրավական դաշտը կանոնակարգելու նպատակով ընդունվեցին մի շարք իրավական ակտեր, մասնավորապես՝

1. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը,
2. «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը,
3. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը,
4. «Հայաստանի Հանրապետության հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը» (ՀՀ կառավարության 08.25.2005թ. N 1365–Ն որոշման հավելված),
5. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բժշկահոգեբանամանկավարժական չափորոշիչները (13.08.2003թ.),
6. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթության չափորոշիչը,
7. Չափավոր և ծանր մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հատուկ կրթության չափորոշիչը,
8. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների տարրական և միջին դպրոցների առարկայական չափորոշիչներն ու ծրագրերը,
9. Ներառական և հատուկ հանրակրթական դպրոցներում աշխատող հատուկ մանկավարժի (ուսուցչի օգնականի), սոցիալական մանկավարժի, հոգեբանի պաշտոնների նկարագրերը,
10. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող սովորողների տարրական դպրոցի բոլոր առարկաների ուսուցման մեթոդական ուղեցույցները:

Ներառական կրթության համակարգը հանրապետությունում ներդրվեց հատուկ հանրակրթական դպրոցներին զուգահեռ:

Օրենսդրական հիմքերը, սահմանում էին ներառական կրթության կազմակերպման հիմնական դրույթները և որոշակիացնում էին անելիքները, սակայն միննույն ժամանակ

⁷ Տես ԿՊԳԿՈՒՄՕ, հոդված 14,

համընդհանուր ներառման հասնելու համար՝ հատվածային ներդրումները պատկերն ամբողջական չէին կարող դարձնել:

Այսինքն երկրում շարունակում էր գործել առանձնացված հատուկ դպրոցների ցանցը, սակայն որպես հնարավորություն առաջարկվող հանրակրթական ընդհանուր դպրոցները կարող էին կազմակերպել ներառական կրթություն և օգտվել պետական ֆինանսավորման բարձրացված չափաքանակից⁸, եթե ապահովված են կրթության առանձնահատուկ պայմաններով⁹ և ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ընդգրկել են ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների ցանկում:

Առանձին դպրոցներում ներառական կրթության ներդրման գործընթացին նախորդող մանկավարժական և ծնողական համակազմերի վերապատրաստումների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հայտնաբերման ու կրթական կարիքի աստիճանի գնահատման, այս և մնացած երեխաներին մանկավարժահոգեբանական ծառայությունների մատուցման գործընթացները առաջացնում էին բազմազան հիմնախնդիրներ՝ կապված դպրոցների աշխարհագրության, ֆիզիկական պայմանների, մանկավարժահոգեբանական ծառայություններ մատուցող հատուկ մանկավարժի, լոգոպեդի, սոցիալական մանկավարժի որակավորում ունեցող կադրերով ապահովվածության հետ: Միաժամանակ, տարբեր օբյեկտիվ պատճառներով առաջանում էր ներառական կրթության քաղաքականության ներդրման գործընթացի ճշտումների օբյեկտիվ անհրաժեշտություն: ՀՀ որևէ համապարփակ տարածքում դպրոցների ցանցի միջոցով ներառական կրթության ներդրման հնարավորությունը առավել կբացահայտեր համընդհանուր ներառական կրթության քաղաքականության ներդրման ծագած հիմնախնդիրների լուծման հնարավոր ռիսկերն ու սահմանափակումները և այս քաղաքականության ճշտման օրենսդրական, կառավարման ու մեթոդամանկավարժական լուծման ենթակա հիմնահարցերը:

Այդ նպատակով *Տավուշի մարզում մեկնարկեց այլ մոտեցում, առավել համարձակ, սակայն առավել համակարգային: Դա հանրակրթական դպրոցների ցանցի միջոցով ներառական կրթության ներդրման հնարավորությունը, իրատեսականությունը, ռիսկերը և սահմանափակումները, մանկավարժամեթոդական լուծման ենթակա հիմնահարցերը գնահատելու հարթակ էր:*

4. Տավուշի մարզի ներառական կրթության փորձնական ծրագրի նպատակը

⁸ Տես ԿԱՊԿՈՒՄՕ, հոդված 1-ին. «Ֆինանսավորման բարձրացված չափաքանակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նվազագույն ֆինանսավորման չափ, որն անհրաժեշտ է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների յիարժեք կրթության ապահովման համար:

⁹ Տես ԿԱՊԿՈՒՄՕ, հոդված 1-ին **կրթության առանձնահատուկ պայմաններ**՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձի կրթության եւ ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ հատուկ կրթական ծրագրեր եւ ուսուցման մեթոդներ, ուսուցման անհատական տեխնիկական միջոցներ, կենսագործունեության միջավայր, ինչպես նաեւ մանկավարժական, սոցիալական եւ այլ ծառայություններ, առանց որոնց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հանրակրթական եւ մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումը դժվար է կամ անհնարին:

ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում ներառական կրթության իրականացման փորձնական ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) նպատակ ունի մեկ մարզի տարածքում գործող հանրակրթական դպրոցներում իրականացնելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության համատարած կազմակերպումը, գնահատելու Հայաստանի Հանրապետության հանրակրթական ոլորտի հնարավորությունները ներառական կրթության կազմակերպման գործընթացում, ստեղծելու յուրաքանչյուր երեխայի համար նպաստավոր պայմաններ՝ ստանալու որակյալ կրթություն:

Ծրագիրը նաև փորձարկելու էր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության ֆինանսավորման և կազմակերպման ռացիոնալացման մեխանիզմների արդյունավետությունն ու կենսունակությունը:

Փորձնական ծրագրի արդյունքների ԳՆԱՀԱՏՈՒՄԸ պետք է բացահայտեր դպրոցների ցանցի միջոցով ներառական կրթություն կազմակերպելու Հայաստանի Հանրապետության հանրակրթական ոլորտի կարողությունները:

5. Ներառական կրթության կազմակերպման ֆինանսավորման կարգը

2005-2010թթ. ներառական կրթության կազմակերպման փորձը ցույց էր տալիս, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպումը հնարավոր էր իրականացնել ոչ միայն առանձին հանրակրթական ուսումնական հաստատություններում, այլև դպրոցների ցանցի միջոցով՝ առանձին տարածաշրջաններում, մարզերում և վերջապես ամբողջ հանրապետությունում:

Այդ առումով սահմանվեցին Տավուշի մարզում դպրոցների ցանցի միջոցով ներառական կրթության համատարած կազմակերպման համար հետևյալ անհրաժեշտ միջոցառումները.

1) Տավուշի մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում ներառական կրթության կազմակերպում, այդ նպատակով 2010թ. ֆինանսական տարում հատկացված ֆինանսավորման շրջանակում, կատարելով մարզի թվով **15** ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներին հատկացված ֆինանսական միջոցների վերաբաշխում՝ ուղղորդված յուրաքանչյուր դպրոցում սովորողների ներառական կրթություն իրականացնող ուսուցչի օգնականի (հատուկ մանկավարժի) հաստիքների սպասարկման համար (յուրաքանչյուր դպրոցի համապատասխան հաստիքների թիվը պայմանավորված է տվյալ դպրոցի դասարանների և (կամ) աշակերտների թվով):

2) ուսուցչի օգնականի (հատուկ մանկավարժի) պաշտոնային պարտականությունների մշակում՝ հիմնված հատուկ մանկավարժի պաշտոնային պարտականությունների լրամշակման վրա.

3) մարզի բոլոր դպրոցներին ուսուցչի օգնականի (հատուկ մանկավարժի) հաստիքների տրամադրում՝ յուրաքանչյուր դպրոցին տրամադրվող հաստիքների քանակի հաշվարկման հիմք համարելով տվյալ դպրոցում սովորողների ընդհանուր թիվը.

4) «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում ներառական կրթության իրականացման փորձնական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում.

5) «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման կամար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում, հաշվի առնելով հետևյալ մոտեցումները.

ա) ֆինանսավորման կարգում սահմանված կարգով ճանաչված՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի համար, ֆինանսավորումը հաշվարկել ըստ աշակերտ թվի ֆինանսավորման բարձրացված չափաքանակով.

բ) սահմանել, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի համար դպրոցին հատկացված ֆինանսները ծախսվում է երեխայի կրթական կարիքի բավարարման համար հատուկ կրթական ծառայություններ կազմակերպելու նպատակով.

6) ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում ներառական կրթության իրականացման փորձնական ծրագրի իրականացումն ապահովել 2010թ. սեպտեմբերի 1-ից 2011թ. օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում,

7) Փորձնական ծրագրի արդյունքներն ամփոփել 2011թ. սեպտեմբեր-հոկտեմբերին:

ՄԱՍ II. ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՐՁԸ: Փուլ երկրորդ (2011-2015թթ.)

1. Փորձնական ծրագրի հիմքերը և զարգացումները

Դեպի համընդհանուր ներառական կրթության տանող նախապատրաստման շրջանը կարելի է համարել 2011-2015 թվականները: Նախորդ փուլի վերլուծությունը տեսանելի դարձրեց, որ անհրաժեշտություն էր առաջացել վերանայել ներառական կրթության կազմակերպման մեխանիզմները, ընդլայնել կրթական ծառայությունների և երեխայակենտրոն մեթոդաբանության ներդրման հնարավորությունները:

Ընդառաջ գնալով «Կրթություն բոլորի համար» միջազգային գործընթացներին և ՀՀ ստանձնած պարտավորություններին, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր» ՀՀ օրենքը և նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպություններում ներառական կրթության իրականացման և ֆինանսական կառավարման ռացիոնալացման, ՀՀ կառավարությունը որոշեց¹⁰ շարունակել Տավուշի մարզում համատարած ներառական կրթության փորձարկման ծրագիրը՝ առաջադրելով նոր խնդիր:

¹⁰ Տես ՀՀ կառավարության 27.01.2011 թվականի N 46-Ն որոշում

2008 – 2011թթ. իրականացված «Ապրել միասին, սովորել միասին» ծրագրի նպատակն էր ստեղծել օրինակելի մոդելներ և մեխանիզմներ, որոնք հավասար հնարավորություններ են ապահովում հաշմանդամություն “ ԿԱՊԿՈՒ Երեխաներին՝ կրթություն ստանալու և իրենց համայնքում լիարժեք ներառվելու համար:

Խնդիրները՝

- փորձարկել համընդհանուր ներառական կրթության մոդելը ՀՀ Տավուշի մարզում,
- աջակցել ՀՀ ԿԳՆ-ին՝
 - մՅՅՖ՝ՔՅՁ ներառական կրթության որակի և գնահատման չափանիշները,
 - լրամշակելու օրենսդրական և նորմատիվ փաստաթղթեր, որոնք կխթանեն ՀՀ-ում ներառական կրթության կայուն զագացումը,
- աՇՅՖ՝ՔՅՁ ԿԱԻ-ին՝ վերապատրաստելու Երևանի և մասնաճյուղերի վերապատրաստողներին՝ հետագայում շարունակելու հանրակրթական դպրոցների ներառական կրթության իրականացումն ու զարգացումը::

Որպես մեկնարկ՝

- Տավուշի մարզի 50 դպրոցների 1600 ուսուցիչներ 2 շաբաթ վերապատրաստվեցին ներառական կրթության թեմանեճով,
- 50 դպրոցներում ստեղծվեցին ռեսուրս սենյակներ, որոնք վերանորոգվեցին, կահավորվեցին, ապահովվեցին տեսաձայնային սարքավորումներով, համակարգիչներով և կրթական նյութերով ու գրականությամբ,
- 50 դպրոցներից 11-ը ճանաչվեցին ներառական,
- ՀՀ կառավարությունը հաստատեց ՀՀ Տավուշի մարզում ներառական կրթության ֆինանսավորման փորձնական կարգը,
- 24 դպրոցներ ևս վերապատրաստվեցին ներառական կրթության թեմանեճով,
- մարզում կազմակերպվեցին 100-ից ավելի իրազեկության բարձրացման և շահերի պաշտպանության միջոցառումներ, կլոր սեղաններ և գիտաժողովներ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների առաջնորդությամբ:

Արդյունքում՝

- հաստատություններում և հատուկ դպրոցներում Տավուշի մարզից երեխաների թիվը հասավ նվազագույնի, կամ 0-ի:
- Տավուշի մարզի բոլոր դպրոցներում վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ դրականորեն փոխվեց, երեխաները իրար նկատմամբ հանդուրժող են:
- Տավուշի մարզում հաշմանդամությունը և կամ այլ հատուկ կարիքը պատճառ չէ մեկուսացման և կրթությունից դուրս մնալու:

2. Փորձնական ծրագրի շրջանակներում մատուցված ծառայությունները: Փորձնական ծրագրի գործընթացում ներգրավված մասնակիցները

«Հուսի կամուրջ» ՀԿ-ի՝ Տավուշի մարզի երեխաների և ընտանիքների աջակցության կենտրոնների միջոցով մատուցվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք

ունեցող երեխաներին՝ դպրոցից դուրս մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ, ինչն իրականացվեց նաև Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի հետ շարունակական համագործակցության արդյունքում:

Մահմանված կարգով գնահատված և վկայագրված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ, աշխատանքի ծավալների ընդլայնմանը համապատասխան, Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների մանկավարժական աշխատողների համար, այդ թվում՝ հատուկ մանկավարժների, կազմակերպվել է վերապատրաստման դասընթացներ:

Միաժամանակ փորձարկվել էր յուրաքանչյուր սովորողի համար անհատականացված ծառայություններ մատուցող և մեթոդամանկավարժական պատրաստվածություն ունեցող ուսուցչի օգնականի ինստիտուտի ներդրման և կայացման հնարավորությունը՝ հանրակրթական դպրոցում:

Այսպիսով՝

- մարզի բոլոր 77 հիմնական դպրոցներում ներդրվեց ուսուցչի օգնականի հաստիքը՝ անկախ ԿԱՊԿՈՒ երեխաների թվից,
- մարզի բոլոր 77 հիմնական դպրոցների ուսուցչի օգնականները, հատուկ մանկավարժները և հոգեբանները վերապատրաստվեցին կրթական կարիքի գնահատման հարցերի շուրջ,
- մարզի 14 դպրոցներում, որոնք ունեին վկայագրված ԿԱՊԿՈՒ երեխաներ, ուսուցչի օգնականի հաստիքից բացի, ունեցան նաև հատուկ մանկավարժի և հոգեբանի հաստիքներ,
- 77 դպրոցներում և մարզի 62 համայնքներում ներդրվեց երեխաների հաշվառման համակարգը,
- 77 դպրոցներում ստեղծվեցին **ծնողների փոխօժանդակության խմբեր**, որոնց ներկայացուցիչները ընդգրկվեցին նաև ծնողական խորհուրդներում,
- գնահատվեց 1450-ից ավելի երեխաներ և նրանցից շուրջ 325-ը ճանաչվեց ԿԱՊԿՈՒ,
- ՀՀ ԿԳՆ ԿԱԻ-ի և մյուս բոլոր մասնաճյուղերի վերապատրաստողները վերապատրաստվեցին ներառական կրթության փաթեթով,
- ՀՀ ԿԳՆ-ի հետ համատեղ ստեղծած աշխատանքային խումբը միավորեց հատուկ կրթության և հանրակրթության պետական չափորոշիչները: **Հայաստանն ունեցավ հանրակրթության մեկ միասնական պետական չափորոշիչ**,
- Երևանի բժշկամանկավարժահոգեբանական կենտրոնի մասնագետների համար կազմակերպվեցին վերապատրաստումներ, կենտրոնը հագեցվեց գույքով:

Հիմք ընդունելով Տավուշի հաջողված փորձը՝ ՀՀ ԿԳՆ-ի հետ համատեղ ստեղծած աշխատանքային խումբը լրամշակեց «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը, ուր ամրագրվեց համընդհանուր ներառական կրթության անցնելու պետական քաղաքականությունը: Օրենքը առաջարկեց նաև **մանկավարժահոգեբանական աջակցության եռաստիճան համակարգի** ներդրումը Հայաստանում:

3. Փորձնական ծրագրի իրականացման ֆինանսավորման մեխանիզմները

Փորձնական ծրագրի թիրախային նպատներից էր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության ֆինանսավորման և կրթության կազմակերպման ռացիոնալացման մեխանիզմների փորձարկումը, դրա արդյունավետության ու կենսունակության գնահատումը:

ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների ֆինանսավորումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1262-Ն որոշման համաձայն՝ միաժամանակ հատկացնելով լրացուցիչ միջոցներ հետևյալ հաշվարկով՝

Լմ=(Հթ*Մա) *Աթ. որտեղ՝

Լմ-ն լրացուցիչ միջոցներ են,

Հթ*-հատուկ մանկավարժների (ուսուցչի օգնականների) թիվն է,

Մա**- հատուկ մանկավարժների (ուսուցչի օգնականների) միջին ամսական աշխատավարձը,

Աթ.- հաշվարկվող ժամանակաշրջանի ամիսների թիվը:

1)* հատուկ մանկավարժների թիվը որոշվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների միջին տարեկան թվից, իսկ ուսուցչի օգնականների թիվը՝ դպրոցի սովորողների միջին տարեկան թվի (առանց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների) 10 տոկոսի հաշվարկից, այսինքն, 15 երեխայի համար 1 հատուկ մանկավարժի (ուսուցչի օգնականի) դրույք, ընդ որում, դպրոցում երեխաների թիվը 7-ից պակաս լինելու դեպքում հաշվարկվում է 0,5 դրույք, իսկ 15-ից ավելի յուրաքանչյուր մինչև 7 երեխայի համար ավելացվում է ևս 0,5 դրույք.

2)** հատուկ մանկավարժների միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է տվյալ դպրոցի մանկավարժական հաստիքների միջին ամսական աշխատավարձի չափով՝ առանց լրացուցիչ վարձատրությունների: Իսկ ուսուցչի օգնականի միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է հատուկ մանկավարժների միջին ամսական աշխատավարձի 80 տոկոսի չափով:

4. Ներառական կրթության ֆինանսական կառավարումը

Որպես ներառական կրթության ապահովման երաշխիք, պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների համար կրթության պայմանների ստեղծումը,

պահպանումը եւ զարգացումը, որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրերին համապատասխան¹¹:

Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը պետությունը ֆինանսավորում է բարձրացված չափաքանակով: Այսինքն, բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի կողմից կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի գնահատում անցած և վկայագրած հանրակրթական ընդհանուր դպրոցում (միայն ներառական դպրոցում) սովորող երեխայի համար սահմանվել էր հավելյալ ֆինանսավորում:

«Ներառական կրթություն» ծրագրի բյուջեն հաշվարկվում էր՝ հիմք ընդունելով ներառական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների միջին տարեկան թիվը, որը ենթակա էր ճշտման ուսումնական տարվա սկզբին, հաշվի առնելով փաստացի կոմպլեկտավորումը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների միջին տարեկան թիվը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\hat{e}_{\text{ն}} = \frac{2 \cdot \hat{e}_{01} + \hat{e}_{09}}{3}$$

Մ_{իջ}-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող փաստացի սովորողների միջին տարեկան թիվն է, Ս₀₁-ը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող փաստացի սովորողների թիվն է հունվարի 1-ի, իսկ Ս₀₉-ը՝ սեպտեմբերի 5-ի դրությամբ:

Ըստ ենթակայության, համաձայն կրթության կառավարման պետական, ինչպես նաև տարածքային կառավարման լիազորված մարմնի և ուսումնական հաստատության միջև կնքված պայմանագրի, ուսումնական հաստատության համար նախատեսվում էր ֆինանսավորման ենթակա գումարի չափը: Ֆինանսավորումն իրականացվում էր տարբերակված չափաքանակով:

Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 20-ի թիվ 1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետականուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 37-րդ կետի (ժգ) ենթակետի, ուսումնական հաստատության տնօրենը կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը, և դրանք, ուսումնական հաստատության խորհրդի առաջարկությամբ ներկայացնում պետական լիազորված մարմնի հաստատմանը:

Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության յուրաքանչյուր տարվա ծախսերը հաշվարկվել են՝

¹¹ Տես ԿՊՊԿՈԲ, հոդված 5,

1. Աշխատավարձի ֆոնդի հաշվարկման համար հիմք ընդունելով նախորդ տարում տվյալ դպրոցի համար հաստատված ծախսերի նախահաշվով ձևավորված սովորող (ուսուցիչ և սովորող) ոչ ուսուցիչ հարաբերակցությունների և աշխատողների միջին ամսական աշխատավարձերի չափերը, և ելնելով տվյալ տարվա բյուջեի հաշվարկի հիմքում դրված վերոհիշյալ ցուցանիշներից նույն համամասնությամբ փոփոխվել են նաև դպրոցի համապատասխան ցուցանիշները և հաշվարկվում են աշխատավարձի գծով ծախսերը:
2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկվել են պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ծախսերը:
3. Մնացած ծախսային հոդվածներով հաշվարկը կատարվել է մեկ միավորի հաշվով (սովորող)՝ տվյալ հոդվածի համար բյուջեի հաշվարկի հիմքում դրված գումարի չափով:

Ֆինանսավորման այս բանաձևի կիրառման արդյունքում, ներառական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկման կտրուկ աճ էին գրանցվել հատկապես Երևանի մի շարք դպրոցներում (աղյուսակ 1): Վերջինս որպես դրական երևույթ՝ առավելապես պայմանավորված է ոչ թե այդ երեխաներին մատուցվող կրթական ծառայությունների որակի կտրուկ բարձրացմամբ, այլ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի համար հատկացվող ֆինանսավորման բարձր չափաբաժնով, որը հավասարեցվել էր հատուկ հաստատություններում յուրաքանչյուր սովորողի համար սահմանված տարեկան ֆինանսավորման չափին:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող մեկ սովորողի ֆինանսավորման չափը 2010թ. ֆինանսական տարում, այդ կարիքը չունեցող սովորողին հատկացվածի համեմատ գերազանցում էր մոտ 5 անգամ: Ֆինանսավորման նման դիվերսիֆիկացիան այժմ ներառական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդգրկման գլխավոր խթանն էր, որի հիմնական մասը ծառայում էր այդ դպրոցներում այս սովորողների հետ աշխատող բազմամասնագիտական թիմի աշխատավարձի ֆոնդի ձևավորմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի համար:

Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտի համար առաջնային խնդիր էր ներառական կրթության համատարած իրականացումը, որի արդյունքում մեր հանրապետության հանրակրթական համակարգը առավել կմոտենար պետական կառավարման այս ոլորտի համար տարբեր փաստաթղթերով հռչակված միջազգային չափանիշներին:

Ներառական կրթություն իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման ներկայիս մեխանիզմը, որոշակիորեն սահմանափակում էր այս ծրագրի իրականացման մասսայականացումը, միաժամանակ, հանգեցնելով այս ուղղությամբ հատկացված պետական միջոցների ոչ ռացիոնալ օգտագործման:

Աղյուսակ 1

Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների ներառական կրթության ֆինանսավորման դինամիկան (2007-2010թթ.)

ԹԹ.	2007		2008		2009		2010	
հ/դ ալր.	աշակեր տների թիվը	ֆինանսավ որման չափը (հազ. դրամ)	աշակեր տների թիվը	ֆինանս ավորմա ն չափը (հազ. դրամ)	աշակերտ- ների թիվը	ֆինանսավ որման չափը (հազ. դրամ)	աշակեր տների թիվը	ֆինանս ավորմա ն չափը (հազ. դրամ)
6	-	-	7	2449.7	22	10803.4	34	16517.6
11	-	-	4	1897.8	11	5401.7	17	8293.8
17	35	13550.0	36	15865.9	35	17187.3	38	18710.7
20	6	1159.8	10	3451.8	17	8348.1	15	7243.9
21			5	2046.8	15	7366.0	10	5245.2
27	45	17705.1	46	20524.8	47	23080.1	44	21697.0
43			12	4107.9	37	18169.4	40	20151.1
59	32	12815.1	37	15601.5	40	19642.6	24	11803.0
62	-	-	6	2280.9	19	9330.2	27	13955.1
65	-	-	2	1044.6	6	2946.4	25	12353.3
82	-	-	-	-	-	-	6	2916.2
83			2	1044.6	7	3437.5	9	4444.4
84	-	-	-	-	-	-	17	8270.5
95	-	-	-	-	-	-	7	3394.5
100	32	12815.1	42	16228.8	48	23571.1	51	25414.0
114	22	3626.8	22	9817.9	22	10803.4	25	12998.5
125	-	-	-	-	-	-	21	10206.8
127	-	-	5	2676.3	15	7366.0	38	18640.7
129	-	-	3	1255.3	9	4419.6	23	11303.4
135	-	-	10	4019.7	30	14732.0	52	25546.4
150	41	16728.6	50	22197.2	53	26026.5	56	27412.7
160	-	-	-	-	-	-	19	9203.6
162	-	-	-	-	-	-	25	12400.0
168	-	-	-	-	-	-	15	7636.5
170			6	2300.6	17	8348.1	26	12714.8
180	6	1159.8	7	2943.3	8	3928.5	9	4467.7
186	-	-	6	2300.6	17	8348.1	20	9868.6
196	-	-	-	-	-	-	2	979.9
200	30	4729.6	32	13563.8	35	17187.3	38	19538.5
Մի. Սեր. կ/հ	69	21679.0	76	31364.4	85	40715.4	91	41896.1

Ներառական կրթություն իրականացնող ցանկացած դպրոցի համար ակնհայտ էր, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների քանակը չի կարող անսահմանափակ ավելանալ, որովհետև դա միանշանակ կհանգեցնէր այդ երեխաներին մատուցվող կրթական ծառայությունների որակի անկման: Տարբեր հետազոտություններով հաստատվել էր, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առավելագույն թիվը ուսումնական հաստատությունում պետք է կազմեր այնտեղ սովորող

աշակերտների 5%-ից ոչ ավելի: Այդպիսի մոտեցման դեպքում ներառական կրթության համատարած կազմակերպման դեպքում առանձին ուսումնական հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կուտակում տեղի չէր ունենա:

5. Արդյունքներն ու խնդիրները

Հաջողված արդյունքները

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող բազմամասնագիտական թիմի համագործակցությունը դպրոցի մանկավարժական մյուս աշխատողների (ուսուցիչների) հետ ժամանակի ընթացքում դրականորեն վերափոխել էր թիմի տեխնիկական գործառույթները, նրան վերածելով բազմապրոֆիլ, յուրաքանչյուր սովորողի համար անհատականացված ծառայություններ մատուցող ուսուցչի օգնականի ինստիտուտի: Այս հեռանկարը յուրաքանչյուր (այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող) սովորողի անհատականացված կրթական կարիքի սպասարկման այն հնարավորությունն էր, որը պետք է նպաստեր ներառական կրթության համատարած կազմակերպմանը:

Հատուկ մանկավարժի ինստիտուտին զուգահեռ ուսուցչի օգնականի ինստիտուտի կայացումը ներառական կրթության կազմակերպման երաշխիքներից է: Դա ծառայություն է բոլոր երեխաների համար:

Փորձնական ծրագրի ֆինանսավորման նոր մեխանիզմը հնարավորություն էր տալիս միջոցները կենտրոնացնել ծառայությունների մատուցման, խորհրդատվության և համապատասխան հաստիքների պահպանման ծախսատարության վրա: Արդյունքում, հատուկ կամ ներառական կրթության մեջ ընդգրկված մեկ երեխայի ծախսով հնարավոր կարող էր լինել սպասարկել ցանկացած երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը՝ նրան հասցնելով ցանկալի արդյունքի:

Ներառական դպրոցները խնդիր ունեին դառնալ խտրական հայացքների դեմ պայքարի, համայնքներում երեխաների կրթության ու սոցիալիզացիայի համար առավել բարենպաստ մթնոլորտի կայացման, կրթության որակի բարձրացման և ներառական հասարակության կառուցման արդյունավետ միջոց: Տավուշի մարզում և Երևանում ԿԱՊԿՈՒ օրենքն իր նշանակալի դերն ունեցավ խտրական վերաբերմունքի հիմքերը սասանելու մեջ:

Դրա շնորհիվ հասարակությունն հանրակրթական դպրոցներում հաշմանդամ երեխաների ներկայության նկատմամբ դարձել է ավելի հանդուրժող. այդ դպրոցներում համերաշխության մթնոլորտն ու երեխաների և ուսուցիչների վերաբերմունքն ու մտածելակերպը նկատելիորեն դրական փոփոխության էին ենթարկվել:

Մանկավարժական տարբեր որակավորումներ ունեցող մանկավարժական աշխատողներին՝ սեփական փորձառության, վերապատրաստումների արդյունքում հաճախակի հաջողվել էր որակյալ կրթական ծառայություններ մատուցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, ինչը հնարավորություն էր

տալիս հատկապես մարզերի հեռավոր դպրոցների այս երեխաներին հանրակրթական դպրոցներում իրենց կրթության իրավունքը իրացնելուն գուզընթաց՝ ստանալու մասնագիտացված կրթական ծառայություններ:

Փորձնական ծրագիրը նպաստավոր էր կրթության մասնակից բոլոր կողմերի համար և տանում էր կրթության որակի բարձրացմանը, քանի որ հիմքում անձն էր՝ իր անհատական հատկանիշներով, կրթության իրավունքով և մասնակցային հնարավորության ապահովման պայմաններով:

Բացահայտված խնդիրները

Ներառական կրթության նախապատրաստական և ընթացիկ աշխատանքների կազմակերպման աշխատանքներում նկատելի դարձան մի շարք խնդիրներ և դժվարություններ, որոնք կապված էին.

- մանկավարժական աշխատողների, ծնողների և հասարակության անդամների կարծրատիպերի ու վերաբերմունքի հետ,
- մանկավարժական աշխատողների պատրաստվածության և պատրաստակամության պակասի հետ,
- մասնագիտական կրթությամբ որակավորված հատուկ մանկավարժների, սոցիալական մանկավարժի, լոգոպեդի և այլն մասնագետների պակասի, ինչպես նաև մանկավարժական կրթության ծրագրային բովանդակության, բժշկական մոտեցումից դուրս մեթոդաբանական մոտեցումների ճկունության պակասի հետ,
- ներառական դպրոցների աշխարհագրությունը, տեղաբաշխվածությունը, մատչելիության խնդիրների և չհարմարեցված միջավայրի հետ,
- միջին և ծանր հաշմանդամությամբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդունելության հարցում ներառական դպրոցների խուսափողականության հետ: Դա ոչ միայն ձևական էր դարձնում ներառումը, այլև անդրադառնում էր երեխաների հատուկ դպրոցից ելքի և ընդհանուր դպրոց մուտքի փաստացի արդյունքների վրա, ինչը բացասական խորը հետևանք էր թողնում երեխայի և ընտանքի հոգեբանության վրա,
- դպրոցները հիմնականում խուսափում էին միջին և բարդ ախտորոշումներով երեխաների ընդունելությունից,
- ներառական կրթության ծավալների ավելացումը ի հաշիվ բարձրացված չափաքանակի գրավչության հետ, այլ ոչ թե որակյալ և մատչելի կրթական ծառայություն կազմակերպելու, քանի որ յուրաքանչյուր ԿԱՊԿՈՒ սովորողի համար հատկացվող ֆինանսավորման բարձր չափաքանակը¹² 5 անգամ (2010թ) գերազանցում էր այդ կարիքը չունեցող սովորողի համար հատկացվածի ֆինանսավորմանը,

¹² ներառական դպրոցի ԿԱՊԿՈՒ սովորողին հատկացվող բարձրացված չափաքանակը հավասարեցված էր հատուկ հաստատություններում յուրաքանչյուր սովորողի համար սահմանված տարեկան ֆինանսավորման չափին

- բժշկահոգեբանական կազմակերպչական գնահատման կենտրոնի տեղաշարժվող աշխատանքների կազմակերպման և երեխայի համար ոչ բնական իրավիճակում, օտար միջավայրում գնահատումների կազմակերպման դժվարությունների հետ,
- հիմնականում հաշմանդամություն ունեցող, այլ ոչ թե բոլոր երեխաների գնահատման մոտեցման որդեգրման հետ:

Ներառական կրթությունով պայմանավորված դպրոցի հավելյալ ֆինանսավորումը արդյունավետությամբ չի օգտագործվում: Մասնավորապես՝

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 20-ից ավելի սովորողներով համալրված դպրոցների բյուջետային նախահաշիվների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ երեխաների համար նախատեսված ֆինանսական միջոցների 25-35%-ը տեղափոխվում է մյուս սովորողների համար նախատեսված ծախսային հոդվածների վրա, կամ ծառայում էր նախատեսվածից ավելի, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ ուղղակի առնչություն չունեցող մանկավարժական նոր հաստիքների ավելացմանը,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին մատուցվող սննդի քանակը, որակը և դրա վրա դպրոցի կատարած ծախսերը չի համապատասխանում այդ սննդամթերքի շուկայական գներին,
- նույն դպրոցում սովորող երեխաների մի մասի համար սննդի կազմակերպումը բացասական արձագանք է առաջացնում մյուս երեխաների և նրանց ծնողների շրջանում,
- կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող սովորողների տրանսպորտային փոխադրման ծախսերը արդարացված էին միայն դպրոցի սպասարկման տարածքից դուրս ապրող երեխաների համար,
- կրթական առանձնահատուկ պայմանի կարիքը տեղափոխելով սոցիալական պաշտպանության դաշտ, արդյունքում մեխանիկորեն պետական միջոցները դրվում են օպտիմալացվող հատուկ կրթության համակարգի ձևաչափի պահպանման վրա: Դա արդարացված չէ հատկապես այն պարագայում, երբ ԿԱՊԿՈՒ երեխայի գնահատման արդյունքում՝ անկախ երեխայի իրական կարիքից, դրա ծանրության աստիճանից և վիճակի բարդությունից, բարձրացված չափաքանակը հաշվարկվում և հատկացվում է միանման:

Ինչպես նաև ներառական կրթություն իրականացնող ցանկացած դպրոցի համար ակնհայտ էր, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների քանակը չի կարող անսահմանափակ ավելանալ, որովհետև դա միանշանակ կհանգեցնեք այդ երեխաներին մատուցվող կրթական ծառայությունների որակի անկման: Տարբեր հետազոտություններով հաստատվել էր, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առավելագույն թիվը ուսումնական հաստատությունում պետք է կազմեր այնտեղ սովորող աշակերտների 5%-ից ոչ ավելի: Այդպիսի մոտեցման դեպքում ներառական կրթության համատարած կազմակերպման դեպքում առանձին ուսումնական հաստատությունում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կուտակում տեղի չէր ունենա:

Նաև շատ կարևոր էր, որ 2009 թվականին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից և Տավուշի մարզում համընդհանուր ներառական կրթության փորձնական ծրագրի դիտարկումից պարզ է դառնում, որ հավասար իրավունքներ ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անընդունելի է երկու իրավական կարգավորման համակարգեր: Այսինքն, ի սկզբանե, օրենքի ուժով առանձնացված են նույն իրավունքի կրողները: Միասնական քաղաքականություն սահմանելու միտումով նպատակահարմար է ունենալ ամբողջացված մեկ օրենք: Հետևաբար՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքում սահմանված որոշակի սկզբունքներ վերանայելով և «Հանրակրթության մասին» և «Կրթության մասին» ՀՀ օրենքներում դրանք արտահայտելով, հնարավոր կլինի ապահովել առավել արդյունավետ և միջազգային չափանիշներին համապատասխանող օրենսդրական դաշտ: **Արդյունքում կունենաք միասնական իրավունք, միասնական իրավական կարգավորում, որը կերաշխավորի բոլորի համար կրթության հավասարության իրավունքը:**

Հասարակության շրջանում ներառական կրթության նկատմամբ մեծացող դրական վերաբերմունքին զուգահեռ ձևավորվել էր երեխաների որոշակի կարգավիճակի տարանջատում. «ներառվող երեխա» և «սովորական երեխա» մոտեցումով: Այսինքն, հասարակությունից առանձնացված հատուկ դպրոցում խնամվող հաշմանդամ երեխան վերածվել է որոշակիորեն ընդունված և ընդհանուր հանրակրթական դպրոցում սովորող կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող երեխայի:

Կրթության պետական աջակցության միջոցառումները, կրթության կազմակերպման նկատմամբ ունեցած ավանդական վերաբերմունքը, որակի չափանիշները, գնահատման համակարգը վերանայելը դարձել էր անհրաժեշտություն:

Կրթության ոլորտին յուրահատուկ տարաբնույթ հիմնախնդիրները խոչնդոտում են ոչ միայն կրթության գործընթացում տարբեր խնդիրներ ունեցող երեխաների ներառմանը, այլև հանրակրթության ոլորտում ներառական կրթության համատարած կազմակերպմանը: Սակայն ընդհանուր առմամբ ներառական կրթության զարգացման հիմնական խոչընդոտները ներառական կրթության ֆինանսավորման և կադրային ապահովման գործող համակարգերն են:

ՄԱՍ III - ՏԱՎՈՒՇԻ ՄՈՂԵԼԸ՝ ՀԱՄԸՆԴԱՆՈՒՐ ՆԵՐԱՌԱՍԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Փուլ երրորդ (2015-2022թթ.)

1. Համընդհանուր ներառական կրթության ներդրման մեկնարկը

Տավուշի մարզի փորձարկման օրինակով, իրատեսական, հիմնավոր և անհրաժեշտ դարձավ համընդհանուր ներառական կրթության ներդրման ուղղությամբ օրենսդրական բարեփոխումների նախաձեռնությունը: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում կատարված լրացումով, որպես պետական քաղաքականություն հռչակվեց հետևյալ սկզբունքը. **«2.1. Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք:** Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը»:

Շրջադարձային փոփոխությունների արդյունքում հնարավոր դարձավ երկրում կրթության կազմակերպման և իրականացման մեխանիզմների արդիականացումը, որոնք համահունչ են ժամանակակից մարտահրավերների կարգավորման ուղղված միջոցառումներին: Դրանք են՝

- օրենքի ուժով ամրագրվում է երեխայակենտրոն կրթության կազմակերպման և կրթական ծրագրի իրականացման գործընթացը՝ համաձայն յուրաքանչյուրի կրթության առանձնահատուկ պայմանի¹³ և զարգացման առանձնահատկության,
- հատուկ և ներառական կրթությունը¹⁴ դիտվում են ոչ թե առանձին խմբի պատկանող անձնաց կրթության կազմակերպման գործընթաց, այլ յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, արտակարգ ընդունակությամբ կամ լեզվամշակութային առանձնահատկություններ ունեցող երեխաների համար կրթական ծրագրի մատչելիությունն և յուրաքանչյուրի մասնակցային հնարավորությունն առավելագույնս ապահովելու միջոցառումների համակարգ: Այս մոտեցման հիմքում ենթադրվում է, որ ուսուցիչը պետք է տեսնի երեխայի հնարավորությունները և զարգացնի կրթական հնարավորությունները:
- Էականորեն փոխվում է նաև Հանրակրթության պետական չափորոշի (ՀՊՉ) բովանդակության սահմանումը, որը երեխային ներկայացվող պահանջ լինելու փոխարեն դիտվում է պետության և մանկավարժական կոլեկտիվին ներկայացվող պայման, որոնք պարտավոր են ցանկացած սովորողի հասցնել չափորոշչով սահմանված արդյունքների: Ըստ օրինագծի, ՀՊՉ նպատակն է սահմանել կրթության մատուցվող բովանդակությունն ու պայմանների ապահովումը, որի արդյունքում երեխան կկարողանա առավելագույնս յուրացնել կրթական համապատասխան ծրագիրը և կրթության միջոցով հասնել

¹³ Տես Հանրակրթության մասին օրենք, հոդված 3, «10.1) **կրթության առանձնահատուկ պայմաններ**՝ անձի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն.»

¹⁴ Տես Հանրակրթության մասին օրենք, հոդված 3, « **ներառական կրթություն**՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովում.»

առարկայական ծրագրերով կամ դրանց հիման վրա մշակված անհատական ուսուցման պլանով (ԱՌԻՊ) սահմանված արդյունքին:

- նախկինում ամրագրված մասնագիտացված աջակցության ծառայությունների համակարգը ընդլայնվել և սահմանվել է որպես «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցությանն ծառայություններ¹⁵», որոնց նպատակն է բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը, որակն ու արդյունավետությունը: Ծառայությունների նման համակարգի ներդրումը նորամուծություն է մեր երկրում, դա այն երաշխիքներից մեկն է, որը հանգեցնելու է փոխուսուցումների, մեթոդական խորհրդատվության և անհատական ուսուցման կազմակերպման:
Վերոնշյալն ամբողջացվել է որպես երեխայի կրթության կազմակերպման աջակցության համակարգ, որը բաղկացած է կրթությանն օժանդակող ծառայությունների մատուցման, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացահայտման, գնահատման և համապատասխան պայմանների ապահովման գործընթացներից:
- Երեխայի կրթության աջակցության մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, այդ թվում՝ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կենտրոնացված գնահատումից անցում են կատարելու եռաստիճան գնահատման համակարգի՝ դպրոցում, տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում: Հետևաբար էականորեն փոխվելու են նաև ֆինանսավորման մեխանիզմները, բայց ոչ ֆինանսավորման ընդհանուր ծավալները:

Ենթադրվող տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների ստեղծումը նախատեսվում է իրականացնել յուրաքանչյուր մարզի տարածքում գործող հատուկ դպրոցի բազայի վրա, քանի որ վերջիններս իրենց նյութատեխնիկական բազաներով և ուսումնամեթոդական պոտենցիալով առավել պատրաստ են երեխայակենտրոն կրթության և նրանց կրթության առանձնահատուկ պայմանների բացահայտման ու գնահատման համար: Բացի դրանից մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները կարող են համարվել այլ ուսումնական հաստատությունների, մանկավարժների, ծնողների ու երեխաների մեթոդական ու սոցիալ-հոգեբանական խորհրդատուները:

2. Անցում համընդհանուր ներառականության. ինչպե՞ս է այն կատարվելու

Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի» մինչև 2025 թվականը Հայաստանն անցում է կատարում ամբողջական և համընդհանուր ներառական կրթության համակարգի: Սա նշանակում է կրթության համակարգում արմատական փոփոխություններ՝ սկսած մի շարք իրավական և նորմատիվ կարգերից վերջացրած ընկալումների փոփոխություն:

Կա թյուր տպավորություն, թե ներառական կրթությունը նախատեսված է սոսկ ֆիզիկական կամ մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար, սակայն համակարգի խորքային

¹⁵ Տես Հանրակրթության մասին օրենք, հոդված 3, «10.4) **մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ**՝ ուսումնամեթոդական, հոգեբանական և մանկավարժական աջակցություն, որը ցուցաբերվում է սովորող երեխային, նրա ծնողին և մանկավարժական աշխատողին.»

ընակալումը փաստում է, որ ներառականությունը շատ ավելի լայն գաղափար է, որի հիմքում ընկած է ոչ թե կոնկրետ երեխայի կամ երեխաների խմբի կրթության իրավունքի ապահովումը, այլ յուրաքանչյուր երեխայի կրթական առանձնահատկությունների վրա հիմնված կրթություն ստանալու հիմնարար իրավունքի ապահովումը: Այսինքն՝ եթե ձևակերպելու լինենք ավելի հակիրճ՝ համընդհանուր ներառականության գլխավոր առաքելությունը մեկն է. **ստեղծել այնպիսի պայմաններ և միջավայր, որ որևէ երեխա կրթությունից դուրս չմնա և դպրոցում ստանա որակյալ կրթական ծառայություններ:**

2017 թվականի դրությամբ՝ ՀՀ-ում գործում է մոտ 250 ներառական դպրոց, որը ընդգրկում է ընդհանուր դպրոցների մոտ 15 տոկոսը:

Անցում կատարել համընդհանուր ներառականության գաղափարին, նշանակում է հրաժարվել առանձին դպրոցներ ներառական դարձնելու գաղափարից և ամբողջ համակարգը պատրաստել ներառականության, այսինքն՝ հանրապետության բոլոր դպրոցները ճանաչել ներառական կրթություն իրականացնող: Սա շատ կարևոր քայլ է, որովհետև **ներառական կրթությունը կրթության առանձին տեսակ չէ:** Դա կրթական գործընթացների ամբողջություն է, որը ենթադրում է յուրաքանչյուր երեխայի կարիքին համապատասխան ուսուցման և դաստիարակության իրականացում: Որքան ավելի շատ է դպրոցում ստեղծված կրթական միջավայրը նպաստում յուրաքանչյուր երեխայի կրթության կարիքի արձագանքմանն ու ապահովմանը՝ անկախ նրանից, թե այդ կարիքն ինչպիսի առանձնահատկությունների վրա է հիմնված, այնքան տվյալ դպրոցն ավելի ներառական է:

Այժմ համակարգը գտնվում է անցումային փուլում, և այս ժամանակահատվածում դեռևս զուգահեռաբար գործելու են ինչպես առանձին ներառական դպրոցները, այնպես էլ հատուկ դպրոցների դեռևս խորհրդային տարիներից ժառանգված համակարգը:

Անցումային փուլ. դեպի համընդհանուր ներառականություն

Հայաստանում որդեգրվել է ըստ մարզերի համընդհանուր ներառականության անցնելու քաղաքականությունը: Մարզ առ մարզ ստեղծվում են մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ իրականացնող կենտրոններ, որոնք պետք է աջակցեն դպրոցներին՝ երեխայի կարիքներին համապատասխան կրթական ծառայություններ մատուցելու հարցում:

2016-2017 ուսումնական տարում ՀՀ-ում համընդհանուր ներառական կրթություն իրականացվել է միայն **Սյունիքի մարզում:** Նոր ուստարվա մեկնարկից՝ **2017թ.** սեպտեմբերց համընդհանուր ներառականության անցումը կապահովվի նաև **Լոռու և Տավուշի** մարզերում: **2018** թվականի սեպտեմբերից ամբողջական ներառականության անցումը պլանավորված է մայրաքաղաք **Երևանում և Արմավիրի մարզում**, այնուհետև գործընթացը կշարունակվի մինչև 2021 թվականը, երբ համընդհանուր ներառականության կրթության համակարգը աստիճանաբար կներդրվի ՀՀ բոլոր մարզերում:

Համընդհանուր ներառականությանը զուգահեռ՝ որոշ հատուկ դպրոցները կշարունակեն գործել՝ ապահովելու համար որոշակի կարիքներ ունեցող երեխաների կրթությունը: **Հաստատվել են երեխայի կրթության կարիքների գնահատման նոր չափանիշները, որոնք այժմ փորձարկվում են Սյունիքի մարզում, այնուհետև կներդրվեն նաև ՀՀ Լոռու և Տավուշի մարզերում:**

Ներդրվում է կարիքների գնահատման բազմամակարդակ համակարգ՝ ֆունցիոնալության յուրաքանչյուր ոլորտի թեթև, միջին, ծանր, խորը խնդիրների համար: Երեխայի կրթությունը որտեղ է նախընտրելի կազմակերպել, հատուկ, թե՛ սովորական դպրոցում, թողնվում է ծնողի հայեցողությանը: **Հատուկ դպրոցներում սովորելու իրավունք կունենան միայն կրթության կարիքի գնահատման արդյունքում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները:** Փաստացի՝ այդպիսի երեխայի համար պետությունն առաջարկում է ն՛ հատուկ կրթություն, ն՛ համընդհանուր ներառական կրթություն՝ սովորական հանրակրթական դպրոցում:

Ովքե՞ր և ինչպե՞ս են գնահատում. սոցիալական ինտեգրումը՝ գնահատման նախապայման

Համընդհանուր ներառականության անցման շրջանակում ներդրվում է երեխայի կրթության կարիքի գնահատման եռաստիճան համակարգ: Առաջին աստիճանի գնահատումը կատարվում է դպրոցում՝ դպրոցի մանկավարժական ներուժի միջոցով՝ ներգրավելով ծնողին և այլ մասնագետներին: Երկրորդ աստիճանի գնահատումը կատարվում է տարածքային մանկավարժահոգեբանական ծառայության կողմից, իսկ գնահատման երրորդ աստիճանը իրականացվում է հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից: Երեխայի կարիքի գնահատման արդյունքներից ելնելով՝ կազմվում է Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների անհատական պլան (ՄԱԾԱՊ), որը երեխայի ԱՌԻՊ-ի մաս է կազմում: Եթե երեխան ճանաչվում է կրթության առանձնահատուկ միջին, ծանր կամ խորը կարիք ունեցող երեխա, և այդ գնահատականը հավաստվում է տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից, ապա դպրոցն այդ երեխաների կրթության կազմակերպման համար ստանում է լրացուցիչ ֆինանսավորում: Այն դեպքերում, երբ առաջանում են վիճելի իրավիճակներ, առաջին երկու մակարդակներում արված գնահատման արդյունքների հետ կապված, նախատեսված է բողոքարկման մեխանիզմ. հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից բողոքարկման արդյունքների ամբողջական ընթացակարգը և կազմակերպվում է գնահատման երրորդ աստիճանը: Ծնողը պարտադիր մասնակցում է երեխայի կարիքի գնահատման և ԱՌԻՊ-ի կազմման գործընթացներին:

Մանկավարժահոգեբանական ծառայությունները իրականացվում են նաև հատուկ մանկավարժի, հոգեբանի, սոցիալական մանկավարժի կողմից: Նախատեսվում է, որ միջին, ծանր և խորը խնդիրներ ունեցող բավարար քանակի երեխաներ ունեցող դպրոցները համալրվելու են նման կադրերով, իսկ փոքր դպրոցները կարող են գնահատման ժամանակ այս մասնագետներին հրավիրել տարածքային կենտրոններից:

Կրթությունից դուրս մնացած երեխաների ներառումը

Նկատի ունենալով, որ ժամանակին հատուկ դպրոցները հիմնականում տեղակայվել են Երևանում, մարզերում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքի կազմակերպումը խնդրահարույց է եղել: Ծնողների համար դժվար է եղել

ապահովել երեխայի տեղափոխումը հատուկ դպրոցներ, իսկ հանրակրթական դպրոցներում այդ երեխաների համար չեն եղել պայմաններ, և նրանք գտնվել են կրթությունից դուրս մնալու մեծ ռիկի տակ: Պաշտոնական հստակ տվյալներ չկան, թե կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների քանի տոկոսն է դուրս մնում կրթությունից: Մի քանի տարի առաջ նման հետազոտություն արվել է ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից, համաձայն որի՝ ՀՀ մարզերում հաշմանդամություն ունեցող երեխաների 18 տոկոսը դպրոց չի հաճախում: Դպրոց չհաճախելու դեպքեր հայտնաբերվել են Սյունիքի մարզում, որտեղ այդ խնդիրն արդեն լուծում է ստացել, քանի որ մարզն անցում է կատարել համընդհանուր ներառականության:

Ակնկալվում է, որ համընդհանուր ներառականության անցումն արմատապես կլուծի այս խնդիրը, և դրան մեծապես կնպաստի նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի համագործակցությամբ մշակվող՝ կրթությունից դուրս մնացած երեխաների վաղ հայտնաբերման, հաշվառման և կրթական համակարգ ներառման ծրագիրը: Նոր ներդրվող երեխաների հաշվառման համակարգը երեխայի կրթական շարժին հետևում է ուսումնառության ողջ ընթացքում, և կրթության ընդհատման դեպքում գործի է դրվում ահազանգի մեխանիզմը:

3. Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման ֆինանսական հիմքերը

ՀՀ ամբողջ տարածքում համընդհանուր ներառման անցման ֆինանսական ծախսերի պլանավորման մեթոդաբանության հիմքում դրվել է Տավուշի մարզի փորձը և «Հանրակրթության մասին ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-200-Ն) սահմանված մոտեցումները:

Նշված օրենքի 3-րդ հոդվածի 10.3 և 10.4 կետերով սահմանված «ներառական կրթություն» և «մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ» հասկացությունների բովանդակությանը համապատասխան ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ ունեցող երեխաների բարձրացված չափաքանակը պետք է ուղղվի հաստատության բոլոր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողների դրույքների սպասարկմանը: Քանի որ ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ ունեցող երեխաների թիվը պետք է հստակեցվի մանկավարժահոգեբանական գնահատման նոր՝ Ֆունկցիաների միջազգային դասակարգման (ՖՄԲ) և այլ հարակից գործիքակազմով, ապա առայժմ նշված խմբերին պատկանող սովորողների թվային ճշգրիտ, անգամ մոտավոր պատկերը դեռևս հստակ չէ: Այն հետագայում կհստակեցվի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների և հանրապետական կենտրոնի կողմից, արդեն իսկ գնահատված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների վերագնահատման և համընդհանուր ներառական կրթության աշխարհագրության ընլայնմանը զուգընթաց նոր հայտնաբերված երեխաների գնահատման արդյունքում:

Ըստ սույն կարգի տվյալ հանրակրթական ուսումնական հաստատությունում ֆինանսավորման բարձրացված չափաքանակի հանրագումարը հաշվարկվում է օրենքով սահմանված ֆունկցիաների միջին, ծանր, խորը խանգարումներ ունեցող սովորողների համար համապատասխան գործակիցների կիրառմամբ և կախված է տվյալ հաստատությունում այս խմբի սովորողների ընդհանուր թվից: Վերջինս կարևորվում է տվյալ հաստատությունում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողների դրույքների հաշվարկման տեսանկյունից (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Ներառական կրթություն ստացող աշակերտների թվաքանակը և ներառական կրթությանը հատկացվող գումարի չափը 2015թ., հազ. դրամ										
Ուսումնական հաստատությունները ըստ ենթակայության	Տարրական		Հիմնական		Միջնակարգ		Ընդհ. հանրակրթ. դպր.թիվ	Ներառ.դպր. թիվ	Ընդամենը /աշ. թիվ/	Ընդամենը
	Աշ. թիվ	Գումար	Աշակ. թիվ	Գումար	Աշակ. թիվ	Գումար				
ՀՀ ԿԳՆ	63	36446.7	286	165456.4	162	93720.0	123	22	511	295623.1
ք.Երևան	807	495820.7	783	481273.9		204.9	156	44	1590	977299.5
ՀՀ Արագածոտնի մարզպետարան	12	9269.3	1	501.0	-		118	1	13	9770.3
ՀՀ Արարատի մարզպետարան	33	21862.9	33	21862.9	2	1325.0	107	3	68	45050.8
ՀՀ Արմավիրի մարզպետարան	76	45975.8	59	35691.7			112	4	135	81667.5
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	50	32190.9	48	30903.3	3	1931.5	117	6	101	65025.7
ՀՀ Լոռու մարզպետարան	134	102387.6	193	147468.8	11	8405.0	150	12	338	258261.4
ՀՀ Կոտայքի մարզպետարան	33	20117.4	48	29261.7	1	609.6	90	4	82	49988.7
ՀՀ Շիրակի մարզպետարան	160	93802.4	212	124288.2	2	1172.5	148	12	374	219263.1
ՀՀ Սյունիքի մարզպետարան	78	48765.3	88	55017.3	3	1875.6	112	11	169	105658.2
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան	44	31542.2	32	22939.8	-	-	48	5	76	54482.0
ՀՀ Տավուշի մարզ	-	-	-	-	-	-	77	-	-	-
Ընդամենը	1490	938181.2	1783	1114665.0	184	109244.1	1358	124	3457	2162090.3

Միաժամանակ, նախատեսվում է բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններում, Տավուշի մարզի օրինակով, ներդնել ուսուցչի օգնականի հաստիքներ: Ուսուցչի օգնականի աշխատավարձի ֆոնդի հաշվարկման հիմքում դրվում է «Ներառական կրթություն» ծրագրով՝ ըստ մարզերի հատկացված բյուջետային միջոցները, որոնք պետք է լրացվեն պետբյուջեից հատկացված լրացուցիչ ֆինանսական միջոցներից՝ ըստ տվյալ մարզում (Երևան քաղաքում) համընդհանուր ներառման ժամանակացույցով սահմանված ֆինանսա-

վորման ըստ ՀՀ կառավարության 18.02.2016թ. N6 արձանագրային որոշմամբ սահմանված ժամանակացույց :

Աղյուսակ 2

ՀՀ մարզերի համար հաշվարկված ուսուցչի օգնականի աշխատավարձի հաշվարկային մոտարկված տարեկան ֆոնդը, հազ. դրամ¹⁶

N	Մարզ	1-ին տարբերակ			2-րդ տարբերակ			3-րդ տարբերակ		
		Մովորողների քանակ	Ուսուցչի օգնականի դրուժներ	Աշխատավարձի տարեկան ֆոնդ	Մովորողների քանակ	Ուսուցչի օգնականի դրուժներ	Աշխատավարձի տարեկան ֆոնդ	Մովորողների քանակ	Ուսուցչի օգնականի դրուժներ	Աշխատավարձի տարեկան ֆոնդ
1	Շիրակ	24771	199	290254	24771	181	263647	24771	197.0	287742
2	Լոռի	24864	218.1	318423.474	24864	196.57	287055.731	24864.00	206.1	300928.80
3	Տավուշ	14675	124	181431	14675	113	165170	14675	119.6	174662
4	Գեղարքունիք	26796	221	322045	26796	190	276928	26796	198.1	289341
5	Սյունիք	13860	103	151085	13860	89	129574	13860	97.2	141987
6	Արարատ	30511	254	371477	30511	226	330603	30511	228.9	334253
7	Արմավիր	30490	264	385496	30490	227	331910	30490	235.5	343892
8	Վայոցշոր	5636	44	64064	5636	42	61414	5636	48.1	70176
9	Արագածոտն	16531	133	193580	16531	122	178043	16531	137.4	200678
10	Կոտայք	28471	234.7	342796.268	28471	187.54	273869.013	28471	194.5	284091
	Ընդամենը՝ մարզեր	216605	1794.6	2620652.2	216605	1573.8	2298212.8	216605	1662.5	2427750.8
Ընդամենը՝ ՀՀ		1-ին տարբերակ			2-րդ տարբերակ			3-րդ տարբերակ		
		301568	2501	3652546	301568	2092	3055215	301568	2183	3187674

Սույն կարգով սահմանված ուսուցչի օգնականի հաստիքների թիվը և աշխատավարձի տարեկան ֆոնդը հաշվարկվել է 2015թ. Պետական բյուջեի «Ներառական կրթություն» ծրագրի ֆինանսական փաստացի ծախսերի հաշվառմամբ (պետք է նկատի ունենալ, որ այս ծրագրով 2015թ. Պլանավորված ցուցանիշերը աննշան փոփոխություն են կրել) երեք տարբերակով, ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի համայնքների (աղյուսակներ 2,3):

(Աղյուսակ 3)

Երևան քաղաքի համար հաշվարկված ուսուցչի օգնականի աշխատավարձի տարեկան ֆոնդը, հազ. դրամ¹⁷

¹⁶ ՀՀ մարզերի ցուցանիշների մեջ ներառված չեն մարզերում գործող ՀՀ ԿԳՆ ենթակայության հանրակրթական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների տվյալները:

N	Համայնք	1-ին տարբերակ			2-րդ տարբերակ			3-րդ տարբերակ		
		Սովորողների քանակ	Ուսուցչօգնականի դրույթներ	Աշխատավարձի տարեկան ֆոնդ	Սովորողների քանակ	Ուսուցչօգնականի դրույթներ	Աշխատավարձի տարեկան ֆոնդ	Սովորողների քանակ	Ուսուցչօգնականի դրույթներ	Աշխատավարձի տարեկան ֆոնդ
1	Կենտրոն	12583	90.0	131472.9	12583	75.63	110436.9	12583	77.13	112627.4
2	Էրեբունի	9393	78.8	115000.5	9393	57.88	84516.2	9393	58.38	85246.4
3	Արաբկիր	9001	79.3	115730.6	9001	56.63	82690.8	9001	56.63	82690.8
4	Նորք-Մարաշ	453	6	8761.9392	453.00	6.00	8761.94	453	6.00	8761.9
5	Դավթաշեն	2812	23.1	33762.7	2812	16.56	24183.0	2812	16.56	24183.0
6	Նուբարաշեն	1421	12.2	17830.5	1421	8.11	11835.9	1421	8.11	11835.9
7	Աջափնյակ	7961	66.1	96454.3	7961	50.02	73045.4	7961	50.02	73045.4
8	Շենգավիթ	11277	92.9	135649.4	11277	72.45	105793.1	11277	72.45	105793.1
9	Մալաթիա-Սեբաստիա	11992	105.7	154385.4	11992	67.86	99097.5	11992	67.86	99097.5
10	Քանաքեռ-Զեյթուն	4837	40.4	59055.5	4837	28.69	41889.4	4837	28.69	41889.4
11	Ավան	4036	34.4	50176.7	4036	23.68	34580.5	4036	23.68	34580.5
12	Նոր -Նորք	9197	77.8	113613.1	9197	54.90	80171.7	9197	54.90	80171.7
Ընդամենը՝ Երևան		1-ին տարբերակ			2-րդ տարբերակ			3-րդ տարբերակ		
		84963	706.6	1031893.6	84963	518.38	757002.3	84963	520.4	759923.0

Ուսուցչի օգնականի աշխատավարձի տարեկան աշխատավարձի ֆոնդի հաշվարկի հիմքում նույնպես դրվել է Տավուշ մարզում փորձարկված մեթոդաբանությունը, ինչը արտացոլված է նաև ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-200-Ն) 21-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվում են ուսուցչի օգնականի հաստիքներ, որոնց թիվը որոշվում է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկի հարաբերակցությունից»: Այն սույն տեղեկանքում ներկայացված է Աղյուսակներ 3-ում տրված ուսուցչի աշխատավարձի տարեկան ֆոնդի հաշվարկի Տարբերակ 1-ում: «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-200-Ն) սահմանված կարգով ուսուցչի օգնականի հաստիքների ներդրումը առաջ կբերի ՀՀ պետությունների վրա ներկա ցուցանիշների հաշվառմամբ մոտ 3 մլրդ դրամի ծախսի ավելացում, որը ամենառիսկային սցենարով հաշվարկված կանխատեսում է:

¹⁷ Երևան քաղաքի ցուցանիշների մեջ են ներառված ՀՀ ԿԳՆ ենթակայության հանրակրթական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների վերաբերյալ տվյալները:

Միաժամանակ, 3-րդ տարբերակի հաշվարկի հիմքում դրվել է ուսուցչի օգնականի դրույքների (հաստիքների) հետևյալ հաշվարկը՝ կախված հանրակրթական ուսումնական հաստատության աշակերտների ընդհանուր թվից որոշվում է *ուսումնական հաստատության սովորողների միջին տարեկանթվի 10 տոկոսի հաշվարկից: 15 երեխայի համար սահմանվում է 1 ուսուցչի օգնականի դրույք, ընդ որում, դպրոցում երեխաների թիվը 7 և 7-ից պակասը ինելու դեպքում հաշվարկվում է 0,5 դրույք, իսկ 15-ից ավելի յուրաքանչյուր մինչև 7 երեխայի համար ավելացվում է նաև 0,5 դրույք:* Ուսուցչի օգնականի հաստիքի ներդրումը հանրակրթական ընդհանուր ծրագրեր իրականացնող բոլոր ուսումնական հաստատություններում ներդրումը ենթադրում է ՀՀ պետությունից վրա ներկա ցուցանիշների հաշվառմամբ **մոտ 2 մլրդ դրամի ծախսի ավելացում:** Վերջինս առավել իրատեսական կանխատեսում է:

Սույն կառավարության որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվում ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգը հաստատելու մասին» 27 հունվարի 2011 թվականի N 46-Ն որոշումը և «Հայաստանի Հանրապետության հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» 25 օգոստոսի 2005 թվականի N 1365-Ն որոշումն 9-րդ և 10-րդ կետերը:

Համընդհանուր ներարական կրթության անցման գործընթացի ավարտին նախատեսվում է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատության կարգավիճակում թողնել շուրջ 6 հաստատությունների: Ուստի նրանց ֆինանսավորման գործընթացները կանոնակարգելու նպատակով անհրաժեշտ է մշակել և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատել «Հայաստանի Հանրապետության հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսավորման կարգ:

Այսպիսով,

1. Սույն կարգի համաձայն այլևս ֆինանսավորման բարձրացված չափաքանակ հատկացվում է միայն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ֆունկցիաների միջին, ծանր, խորը խանգարումներով այն երեխաներին, ովքեր սահմանված կարգով գնահատվել և վկայագրվել են,

2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող՝ ֆունկցիաների միջին, ծանր, խորը խանգարումներով հանրակրթական դպրոց հաճախող յուրաքանչյուր սովորողի կրթության և մանկավարժահոգեբանական ծառայությունների համար տարեկան կտրամադրվի շուրջ 600 000 դրամ, այնուհետև այդ թիվը կրազմապատկվի նրա խնդրի աստիճանի համար սահմանված (միջին, ծանր կամ խորը) գործակցով,

3. Այսուհետ, թեթև խնդիր ունեցող սովորողները կստանան այն ֆինանսավորումը, ինչը նախատեսված է մյուս սովորողների համար,

4. Այս երեխաների համար նախկինում նախատեսված սննդի և տրանսպորտի ծախսերի կատարում չի նախատեսվում,

5. Երեխաներին հատկացված ֆինանսավորումը նախատեսված է միայն կրթական ծառայությունների (տրամադրում են ուսուցիչները և (կամ) մանկավարժահոգեբանական ծառայությունների) համար:

4. Համընդհանուր ներառման դրական կողմերը

Համընդհանուր ներառական կրթության ներկայիս քաղաքականությունը և մեխանիզմները շահեկան են թե՛ կրթության նպատակային կազմակերպման, թե՛ ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության և թե՛ մարդու իրավունքների հարգման տեսանկյունից: Սա այն դեպքն է, երբ շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այսպիսով.

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան դառնում է իրավահավասար բոլոր երեխաների հետ: Նրա կրթության և հասարակական կյանքին մասնակցությունը իր փոխարեն չեն որոշում, այլ տրվում է հնարավորություն բացահայտվելու իր բոլոր ունակություններով և դրսևորվելու իր համար հաղթահարելի ձևերով ու մեթոդներով: Շեշտը դրվում է երեխայի ուժեղ կողմերը զարգացնելու, իսկ թույլ կողմերը ուժեղացնելը իրականացվում է կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը գնահատելու և այդ պայմանը ապահովելու միջոցով: Այսինքն, երեխան ոչ թե ունի առանձնահատկություններ, «ֆիզիկական ու մտավոր արատներ», այլ տարբեր պատճառներով ունի դժվարություններ՝ կրթությանը լիարժեք մասնակցելու համար: Դա կարող է լինել, ֆիզիկական միջավայրը, տեխնիկական սարքերը, մասնագետի աշխատանքը, ուսուցման մեթոդը, ուսումնական հարմարեցված նյութերը և այլն:

Կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող երեխայի ընտանիքը դադարում է խուսափել իր երեխայի խնամքից կամ նրա հետ միասին հասարակական շփումներից, քանի որ հանրային միջավայրը հանդուրժողականությամբ է վերաբերվում իր երեխային՝ ընդունելով վերջինիս հավասար լինելու իրողությունը: Ընտանիքի անդամի հետ իրականացվող մասնագիտացված աջակցության ծառայությունները, ինչպես նաև երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի գնահատման գործընթացին անմիջական մասնակցությունը, մասնագետների խորհրդատվությունը և միջավայրի վերաբերմունքը օգնում են ծնողին ավելի օգտակար լինել իր երեխային, դուրս գալ անելանելիության ու ամոթի բարդությից և օգնել իր երեխային հաղթահարելու անհատական ուսուցման պլանով սահմանված բովանդակային նպատակադրումները:

Պետությունը աստիճանաբար հաղթահարում է սոցիալական պետության իր խնդիրը, նվազում է հասարակության շերտավորումը և դրանով կարողանում է կատարել երկրի ստանձնած միջազգային հիմնական պարտավորությունները, հասնում է բյուջետային միջոցների արդյունավետ ու նպատակային բաշխմանը, քանի որ հատկացումները կատարվում են ավելի մեծ թվով երեխաների կրթությունը կազմակերպելու և ոչ թե սոցիալական խնդիր լուծելու համար: Երեխաների շրջանում իրավահավասարության ապահովումը հանգեցնում է

ստեղծագործական հնարավորություններով ու ինքնուրույն գործելու պատրաստ մարդու ձևավորմանը: Մարդն ինքն է ընտրում՝ լինել նպաստառու, թե հարկատու:

Հասարակությունը գնում է հոգեբանական առողջացման, նվազում է սոցիալական շերտավորումը, անձի կախյալությունը որոշում կայացնողներից: Մարդն ինքն է ընտրում՝ լինել նպաստառու, թե հարկատու:

Բացի այդ, Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման փորձնական կարգի ներդրման չորս տարիների փորձը ցույց է տվել, որ հատուկ մանկավարժների և ուսուցչի օգնականների ինստիտուտները ֆինանսական ծախսերի տեսանկյունից խնդիրներ չեն առաջացրել: Այդ իսկ պատճառով **ՀՀ ամբողջ տարածքում համընդհանուր ներառման անցման ֆինանսական ծախսերի պլանավորման մեթոդաբանության հիմքում դրվել է Տավուշի մարզի փորձը:**

5. Համընդհանուր ներառման իրավական հիմքերն ու իրականացումն այսօր

Համընդհանուր ներառական կրթության համակարգին անցնելու համատեքստում, 2014 թվականի դեկտեմբերին «Հանրակրթության մասին» և «Կրթության մասին» ՀՀ օրենքներում կատարվեցին համապատասխան լրացումներ և փոփոխություններ: Նշված օրենսդրական նախաձեռնությունների անհրաժեշտությունը պայմանավորված էր «Կրթություն բոլորի համար» հոչակագրի, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի և «Սոցիալական խարտիայի» պահանջներով, որոնց միանալով՝ Հայաստանը պարտավորվել էր ապահովել կրթության հավասար հնարավորություն բոլորի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

2010 թվականի մայիսին վավերացված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթները հրատապ դարձրեցին օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը: Ոլորտի կառավարման և կրթության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու և նույն խնդրին ուղղված գործողությունները համակարգելու, խնդրիների լուծման ուղղությամբ միասնական քաղաքականություն սահմանելու միտումով՝ նպատակահարմար էր ունենալ ամբողջացված մեկ օրենք: Հետևաբար՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքում սահմանված որոշակի սկզբունքներ վերանայելով և «Հանրակրթության մասին» և «Կրթության մասին» ՀՀ օրենքներում դրանք արտահայտելով՝ հնարավոր կլինե՞ր ապահովել առավել արդյունավետ և միջազգային չափանիշներին համապատասխանող օրենսդրական դաշտ:

Նման նախաձեռնությամբ խնդիր էր դրված հասնել իրական հավասարության՝ պահպանելով «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի բոլոր սկզբունքները:

Արդյունքում, կունենայինք երեխայի անհատական տարբերություններից ու հաշմանդամությունից անկախ կրթության իրավունքի միասնական իրավական կարգավորում, որը կերաշխավորեր բոլորի համար կրթության հավասարության իրավունքը:

«Ներառական կրթություն» ասելով այսօր հասկանում ենք՝ յուրաքանչյուր (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) երեխայի համար, իր զարգացման առանձնահատկություններին համապատասխան անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով, կրթական գործընթացին առավելագույն մասնակցություն ու հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքի ապահովում:

Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից տրված՝ երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ եզրակացության հիման վրա, տարածքային կառավարման պետական մարմինը կվկայագրի երեխայի՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագիր ունեցող այն երեխաները, որոնք ունեն՝ 1) ձայնի և խոսքի, 2) լսողական ֆունկցիաների միջին, ծանր և խոր խանգարումներ, կօգտվեն կրթության կազմակերպման համար լրացուցիչ պետական աջակցությունից ֆինանսավորման բարձրացված չափաքանակով:

Տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների համար պետական լիազոր մարմինը կրթության պետական կառավարման լիազորված մարմինն է:

Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն համապատասխան միջոցառումների աստիճանական և համալիր իրականացման դեպքում: Այդ գործողությունների հիմնական ուղղություններն են՝

- 1) կառուցվածքային բարեփոխումները,
- 2) իրականացվող ծառայությունների ապակենտրոնացումը,
- 3) կառավարման և ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրումը,
- 4) երեխաների կրթության և աջակցող ծառայությունների որակի բարելավումը,
- 5) դպրոցներում շենքային պայմանների բարելավումն ու նյութատեխնիկական բազայի համալրումը:

Համակարգի ներդրումն ապահովելու նպատակով հաստատվել են մի շարք իրավական ակտեր: Որպես առաջին քայլ, ՀՀ վարչապետի 2015 թվականի փետրվարի 17-ի N108-Ս որոշմամբ հաստատված՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկի համաձայն, ընդունվել են հետևյալ իրավական ակտերը՝

- 1) «Տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N1506-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի նոյեմբերի 19-ի N1330-Ն որոշումը,

- 2) «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N1365-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011 թվականի հունվարի 27-ի N46-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի N141-Ն որոշումը:
- 3) «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N1047-Ն որոշումը,
- 4) «Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների գործունեության ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N968-Ն որոշումը,
- 5) «Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների օրինակելի կանոնադրությունները և ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N1058-Ն որոշումը:

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացը կանոնակարգելու նպատակով հաստատվել են նաև՝

- 1) «Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագրի տիպային ձևը հաստատելու, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի օգոստոսի 6-ի N1281-Ն և 2009 թվականի նոյեմբերի 11-ի N927-Ն հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի օգոստոսի 23-ի N825-Ն հրամանը,
- 2) «Մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշները հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի նոյեմբերի 23-ի N 1202-Ա/2 հրամանը:

Իսկ ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի» համաձայն ընդունվել են՝

- 1) «Միսիանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ /օժանդակ դպրոց» ՊՈԱԿ-ը վերանվանելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 22-ի N969-Ն որոշումը,
- 2) «Գորիսի N1 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ը վերանվանելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N986-Ն որոշումը,
- 3) «Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոն» ՊՈԱԿ-ը վերակազմակերպելու, «Հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն», «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Ստեփանավանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ներ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N10-Ն որոշումը:

Այսպիսով, համաձայն հաստատված ժամանակացույցի, 2016 թվականին համընդհանուր ներառական կրթության համակարգը ներդրվել է Սյունիքի մարզում, որի արդյունքում`

- ձևավորվել(վերակազմակերպվել) են 3 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ,
- մարզում իրականացվել են վերապատրաստումներ ներառական կրթության թեմայով, ներդրվել է ուսուցչի օգնականի հաստիքը,
- կիրառվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը` ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի,
- վերակազմակերպված տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններից իրականացվել է աշակերտների տեղափոխումը հանրակրթական դպրոց:

2017 թվականի սեպտեմբեր ամսից համընդհանուր ներառական կրթության համակարգը ներդրվել է Լոռու և Տավուշի մարզերում, այդ նպատակով «Վանաձորի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ) դպրոցը» և «Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ) դպրոցը», վերանվել են Վանաձորի և Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, ինչպես նաև ձևավորվելու է Վանաձորի մասնաճյուղը Ալավերդի քաղաքում: Տավուշի մարզում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները պատվիրակվել են «Հույսի կամուրջ» ՀԿ-ին` հաշվի առնելով վերջինիս փորձը ներառական կրթության ոլորտում:

Համապատասխան վերապատրաստումներ են անցել հանրակրթական դպրոցների վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, մանկավարժներ, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետներ ու ծնողներ:

ՄԱՍ IV. Մարտահրավերները համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման ճանապարհին

Ա. Մարտահրավերներ քաղաքականություն մշակողների համար

Ա. Վերաբերմունքի փոփոխություն և քաղաքականության մշակում

- **Անհրաժեշտ է «Ներառական կրթություն»** եզրույթը էլ ավելի պարզաբանել և ընդունելի դարձնել մանկավարժների, պետական և ոչ պետական կազմակերպությունների, քաղաքականություն մշակողների և այլ դերակատարների համար,
- **Անհրաժեշտ է բարձրացնել ներառական կրթության վերաբերյալ հասարակության ընկալման, իրազեկության ու աջակցության ցածր մակարդակը**՝ տարածքային/մարզային և ազգային մակարդակներում, շահերի պաշտպանության և երկխոսության միջոցով,
- **Անհրաժեշտ է, որ տնտեսական և սոցիալական երկարաժամկետ կայուն զարգացման քաղաքականությունները հաշվի առնեն ներառական կրթությունը,**
- **Անհրաժեշտ է միջուկորտային ինտեգրված և գործընկերային մոտեցում՝** որպես կրթության իրավունքի երաշխիք,
- **Անհրաժեշտ է տարածքային և ազգային մակարդակներում ապահովել** քաղաքականությունների հանրային ընկալումը, իրազեկությունն ու աջակցությունը:

Բ. Ներառման ապահովում վաղ մանկության խնամքի և կրթության միջոցով

- **Վաղ մանկության միջամտությունները** պետք է դիտարկվեն որպես բոլոր երեխաների կրթության իրավունքի իրացման երաշխիքի կայուն ուղի՝ առաջին իսկ օրվանից:

Գ. Ներառական ուսումնական ծրագիր

- **Նախադպրոցական կրթությունից տարրական և միջնակարգ կրթություն սահուն անցումն ապահովող ուսումնական ծրագրերը** կանխում են երեխաների կրթությունից դուրս մնալը,
- **Ուսումնական ծրագրերի փոփոխությունն** արհրաժեշտ է ճկուն ուսումնառության և գնահատման գործընթացին աջակցելու համար,
- **Ոչ-Ֆորմալ կրթության հնարավորությունները** պետք է ներառվեն ուսումնական ծրագրերում,
- **Խիստ ակադեմիական, ծանրաբեռնված ուսումնական ծրագրերն անարդյունավետ են ներառական կրթության համար,**
- **Հարկավոր է խրախուսել շատ շահագրգիռ կողմերի մասնակցությունը** ուսումնական ծրագրերի մշակման գործընթացում:

Դ. Ուսուցիչներ և մանկավարժական կրթություն

- **Մանկավարժական կրթական ծրագրերը,** (թե բուհերում ուսանողների համար, թե պրակտիկ ուսուցիչների համար) պետք է վերափոխվեն և հարմարեցվեն ներառական կրթության մոտեցումներին, որպեսզի վերափոխված ուսումնական ծրագրերի հիման վրա ուսուցիչներին տրվի անհրաժեշտ մանկավարժական կարողություններ դասարանում աշխատանքն ավելի բազմազան կազմակերպելու համար
- **Կրթության բոլոր մասնագետների, այդ թվում նաև համայնքի անդամների,**

վերապատրաստումը ներառական դպրոցին աջակցելու կարևորագույն բաղադրիչներից է

- **Ուսուցիչների սոցիալական կարգավիճակի բարելավման խթանների ստեղծումն ու նրանց կենսապայմանների բարելավումը** այն անհրաժեշտ նախապայմաններն են ուսուցչի դերն ավելի պրոֆեսիոնալ դարձնելու համար (օր., աշխատավարձերի բարձրացում, բնակարանային պայմանների բարելավում, իրենց աշխատանքի հանդեպ հարգանքի մեծացում, և այլն):

Ե. Միջոցներ և օրենսդրություն

- Անհրաժեշտ է վերանայել և փոփոխել ազգային օրենսդրությունը՝ ներառական կրթության տեսանկյունից,
- Միջազգային կոնվենցիաները պետք է ստորգրվեն և վավերացվեն՝ իրենց արտացոլումը գտնելով ազգային օրենսդրության մեջ,
- Քաղաքականությունների և օրենքների իրականացումը պետք է խթանվի և կիրարկվի,
- Ներառական կրթության համար բյուջետային հատկացումները պետք է լինեն արդար, թափանցիկ, հաշվետու և արդյունավետ:

Բ. Վերաբերմունքի փոփոխությունը նախորդում է արդյունավետ քաղաքականության մշակմանը

Վերաբերմունքի փոփոխության ստուգաթերթ

Ներառական կրթության հայեցակարգը արդյո՞ք հայտնի և ընդունված է:
Ծնողները ակտիվ մասնակցում են արդյո՞ք կրթության գործընթացին:
Ներառական կրթությանն աջակցելու համար իրականացվում են արդյո՞ք իրազեկության բարձրացման ծրագրեր:
Ներառական կրթությանն աջակցելու համար խրախուսվում են արդյո՞ք տեղական համայնքներն ու մասնավոր հատվածը:
Ներառական կրթությունը դիտարկվո՞ւմ է որպես սոցիալական և տնտեսական զարգացման կարևոր գործոն:
Ներառական կրթությանն աջակցելու համար բավարար կերպով է արդյո՞ք օգտագործվում հատուկ դպրոցների և/կամ հաստատությունների ներուժը:

Գ. Ներառական ուսումնական ծրագրի մշակում

Ներառական ուսումնական ծրագրի ստուգաթերթ

Ուսումնական ծրագիրը խթանում է արդյո՞ք խտրականության բացառման, բազմազանության գնահատման և հանդուրժողականության սկզբունքները:
Մարդու իրավունքներն ու երեխայի իրավունքները ուսումնական ծրագրի մաս կազմում են արդյո՞ք:
Ծրագիրն արձագանքում է արդյո՞ք իրավունքի և պատասխանատվությունների համատեղմանը:
Արդյո՞ք ծրագիրը ներառական է բոլոր երեխաների համար:
Ծրագրի բովանդակությունը համապատասխանո՞ւմ է երեխաների և երիտասարդների կարիքներին և ապագայի տեսլականին:
Ուսումնական ծրագրերը, նյութերն ու դասավարդման մեթոդները հարմարեցված և հարիր են արդյո՞ք երիտասարդների և մեծահասակների կյանքին:
Ուսումնական ծրագիրը թույլ տալի՞ս է կատարելու աշխատանքային մեթոդների փոփոխություն:
Ուսումնական ծրագիրը խթանում է արդյո՞ք առողջության պահպանման և առողջ սնուցման վերաբերյալ կրթությունը:
Ուսումնական ծրագրում ներառվա՞ծ է ՄԻԱՎ/ՁԻԱՀԻ կանխարգելման վերաբերյալ կրթական բաղադրիչ:
Ուսումնական ծրագիրը զգայուն արդյո՞ք է մշակութային ինքնության և լեզվի հանդեպ:
Ուսումնական ծրագիրը դիտարկում է արդյո՞ք «կրթություն կայուն զարգացման համար» կարգախոսը:
Ուսումնական ծրագիրն արտացոլո՞ւմ է երկրի զարգացման տեսլականն ու նպատակները:
Ծրագրի կանոնավոր վերանայման նպատակով պահպանվո՞ւմ է հետադա՞ձ կապ նոր տեսլականներ մշակելու և նոր հանգամանքներ հաշվի առնելու համար:

Դ. Ուսուցիչներ և ուսումնառության միջավայր

Ուսուցիչների և ուսումնառության միջավայրի ստուգաթերթ

Ամբողջ երկրի մասշտաբով կա արդյո՞ք բավարար թվով վերապատրաստված ուսուցիչներ:
Ուսուցումը բոլոր երեխաների համար ներառական է արդյո՞ք և խթանո՞ւմ է սովորողների մասնակցությունը:
Ուսուցիչների մասնագիտական զարգացումն ու մոտիվացիան ուժեղացվում է արդյո՞ք խթանների և շարունակական մասնագիտական զարգացման միջոցով:
Ընդունված է արդյո՞ք բազմալեզվությունը, մասնավորապես ուսուցման առաջին տարվա ընթացքում մայրենի լեզվով դասավանդման կարևորության ճանաչումը:
Ուսումնառության միջավայրը ապահով և առո՞ղջ է:
Ուսուցման մեթոդները փոխներգործո՞ւն (իրտերակտիվ) են:
Ուսուցման մեթոդները հարմարեցվա՞ծ են տարբեր տարիքային խմբերի համար (երեխաներ, երիտասարդներ, մեծահասակներ):
Խրախուսվո՞ւմ է ուսուցիչների թիմային աշխատանքը:
Աշխատանքը ծրագրի իրականացմանն է արդյո՞ք միտված: Ուսուցումը հիմնականում տեսակա՞ն է, թե գործնական:
Արդյո՞ք նյութերը բավարարում են սովորելու դժվարություններ (տեսողության խանգարումներ, լսողության խանգարումներ եւ այլն) ունեցող բոլոր աշակերտների կրթական կարիքները:
Խրախուսվում է արդյո՞ք ուսուցիչների գործընկերությունը ծնողների և քաղաքացիական հասարակության հետ:

Ե. Աջակցություն քաղաքականության ցիկլին/շրջանին

Ներառական կրթությանն առնչվող մտահոգություններ և առաջարկվող գործողություններ

Քաղաքականության մտահոգություններ	Քաղաքականության և առնչվող հարցեր	Լուծում պահանջող բացեր	Առաջարկվող գործողություններ
<p>Ա. Քաղաքականությունների և պլանների մշակումից առաջ անհրաժեշտ է կատարել կարիքի վերլուծություն և կարիքի ախտորոշում</p>	<p>Կրթությունից դուրս մնացած երեխաների, երիտասարդների և մեծահասակների ներգրավում</p> <p>1. Ի՞նչ է հայտնի ներկա իրավիճակի մասին</p> <p>2. Շա՞տ երեխաներ են կրթությունից դուրս մնացել</p> <p>3. Երիտասարդներին առաջարկվում է համապատասխան կրթական և վերապատրաստման ծրագրեր</p> <p>4. Կրթության կարիք ունեցող բոլոր մեծահասակներին հնարավոր է արդյո՞ք ընդգրկել</p>	<p>1. Կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ վիճակագրության և տեղեկատվության պակաս.</p> <p>2. Ովքե՞ր են կրթությունից դուրս մնացած երեխաները և ինչու չեն ներգրավված.</p> <p>3. Խրախուսել երիտասարդներին մասնակցելու իրենց հետաքրքրություններին համապատասխան կրթական և վերապատրաստման ծրագրերին</p> <p>4. Ներգրավել մեծահասակներին համապատասխան կրթական և վերապատրաստման ծրագրերում</p>	<p>Ա 1. Խթանել նորարարական ծրագրեր և աջակցել համայնքերի կարողությունների զարգացմանը՝ կրթությունից դուրս մնացած երեխաներին բացահայտելու նպատակով, երիտասարդներին և մեծահասակներին, ուղղորդելով նրանց դպրոց կամ այլ կրթական ու վերապատրաստման ծրագրեր,</p> <p>Ա 2. Համայնքներին ընդգրկել կրթության կարիք ունեցող մեծահասակների ներգրավման ծառայություններում,</p> <p>Ա3. Դպրոցներին և համայնքներին ներգրավել՝</p> <ul style="list-style-type: none"> – տնային տնտեսությունների քարտեզագրման և կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման մեջ, – քարոզարշավների և համայնքի մոբիլիզացման աշխատանքում՝ տեղական իշխանությունների հետ գործընկերությամբ. <p>Ա4. Առաջարկել աջակցության մեխանիզմներ տեղական մակարդակում՝ կրթությունից դուրս մնացած երեխաների, երիտասարդների և մեծահասակների ներգրավման համար.</p>

Քաղաքականության մտահոգություններ	Քաղաքականությանն առնչվող հարցեր	Լուծում պահանջող բացեր	Առաջարկվող գործողություններ
<p>Բ. Կրթությանն առնչվող տվյալների հավաքագրման համակարգերն ու մեթոդները կարևոր են քաղաքականության և գործնական կիրառման համար</p>	<p>Տվյալների հավաքման համակարգ</p> <p>1. Ձեր երկրում առկա՞ է տեղեկատվության հավաքման, պահպանման և մշտադիտարկման համապատասխան համակարգեր.</p> <p>2. Ձեր երկրի կրթության քաղաքականությունը կառուցվա՞ծ է տեղեկատվության հավաքման համակարգի վրա՝ ներգրավելով համայնքների երեխաներին, երիտասարդներին և մեծահասակներին մասնակցային գործընթացներում</p>	<p>1. Տվյալների համակարգերի պակաս</p> <p>2. Տվյալների հավաքագրումը թույլ է և հատվածային</p> <p>3. Պլանավորումը դժվար է, առանց համապատասխան տվյալների</p> <p>4. Ազգաբնակչության քարտեզավորման բացակայություն</p>	<p>Բ1. Ազգային մակարդակում ստեղծել տվյալների համակարգեր.</p> <p>Բ2. Խրախուսել տնային տնտեսությունների հետազոտությունները.</p> <p>Բ3. Հզորացնել տեղական ՀԿ-ների տվյալներ հավաքելու կարողությունները.</p> <p>Բ4. Համայնքներին ներգրավել տվյալներ հավաքելու գործընթացում:</p>
<p>Գ. Քաղաքականություններն ու պլանները պետք է</p>	<p>Ներառական կրթությունը որպես</p>	<p>1. Իրավական փաստաթղթերի</p>	<p>Գ1. Ապահովոլ, որ ազգային օրենսդրությունը համահունչ լինի միջազգային կոնվենցիաներին.</p>

<p>միտված լինեն բնակչության խոցելի խմբերին և կարևոր են կրթության իրավունքի հիմքերը</p>	<p>իրավունքի խնդիր 1. Ձեր երկրի քաղաքականությունները դիտարկու մ են ներառում մարդու իրավունքների տեսանկյունից և օգտվում են արդյո՞ք մարդու իրավունքներից՝ ներառական քաղաքականությունների հիմնավորման համար.</p>	<p>ընդունման և կիրարկման մեխանիզմները թույլ են. 2. Գյուղական և/կամ հեռավոր շրջանների երեխաներն ու երիտասարդները դեռ դո՞ւրս են մնում կրթությունից. 3. Շատ մեծահասակների համար հասանելի են արդյո՞ք կրթական ծրագրերը</p>	<p>Գ2. Ապահովել, որ քաղաքականություններն արտացոլեն իրավունքի վրա հիմնված աղքատամետ մոտեցումներ և թիրախավորեն խոցելի երեխաներին. Գ3. Նպաստել երիտասարդների և մեծահասակների համար իրականացվող ծրագրերին:</p>
<p>Դ.Քաղաքականության սահմանումները միջոց չէ որ հստակ են: Ներառական կրթությունը հիմնականում դիտարկվում է հաշմանդամության կամ հատուկ կարիքների տեսանկյունից;</p>	<p>Ներառական կրթության սահմանումները 1. Ձեր երկրի քաղաքականությունները հիմնվա՞ծ են ներառական կրթության համապարփակ սահմանման վրա: 2.Քաղաքականությունները դիտարկու մ են արդյո՞ք «հատուկ կարիքներ» և</p>	<p>1. Ներառական կրթության օրենսդրության բացակայություն 2. Հստակ հայեցակարգի բացակայություն</p>	<p>Դ1. Կազմակերպել իրազեկության բարձրացման քարտզարշավներ՝ ԶԼՄ-ների, պաստառների, համաժողովների և դասընթացների միջոցով. Դ2.Ներգրավել համայնքներին և տեղական առաջնորդներին:</p>

	«ներառական կրթություն» հասկացությունների տարբերությունը:		
<p>Ե. Ներառական կրթության համար ֆինանսների հատկացումը մարտահրավեր է</p>	<p>Միջոցների հատկացում 1. Ձեր երկրի քաղաքականությունները խրախուսում են արդյո՞ք ներառական կրթության համար հասցեական բյուջե:</p>	<p>1. Բյուջեների միջոցներն արդյունավետ կերպով չեն տնօրինվում: 2. Խիստ կանոնակարգերը Թույլ չեն տալիս, որ ռեսուրսներն ուղղորդվեն այտեղ, որտես անհրաժեշտ են: 3. Վաղ մանկության խնամքն ու կրթությունը (ՎՄԽԿ) առաջնահերթ չի համարվում և, հետևաբար, բավարար միջոցներ չեն հատկացվում:</p>	<p>Ե1. Ապահովել արդյունավետ պլանավորում և բյուջեի հատկացումներ կրթության ոլորտում՝ հասարակության այլ ոլորտների հետ մեկտեղ. Ե2. Ապակենտրոնացնել կրթության համակարգի ֆոնդերի օգտագործումը. Ե3. Ապահովել, որ տարբեր գերատեսչությունների ՎՄԽԿ-ն առնչվող բյուջեները (սոցիալական, առողջապահություն, կրթություն և այլն) համակարգվեն. Ե4. Ապահովել, որ բյուջետային հատկացումներն աջակցեն անտեսված խմբերին. Ե5. Թույլ տալ միջոցների օգտագործման ճկունություն՝ աջակցելու համար ներառական դպրոցներին, կրթական և/կամ վերապատրաստումների ծրագրերին:</p>
<p>Զ. Ներառական կրթությունը հիմնականում ներկայացվում է որպես առանձին</p>	<p>Ամբողջական (ընդգրկուն) մոտեցում 1. Ձեր երկրի քաղաքականությունները նիտարկում</p>	<p>1. Տարբեր սովորողների համար տրամադրվում է առանձին և սեգրեգացված կրթություն: Գործում</p>	<p>Զ1. Ապահովել կրթության միջոլորտային պլանավորում Զ2. Տնտեսական և սոցիալական զարգացման համար մշակել երկարաժամկետ քաղաքականություններ՝ ներառական կրթության նպատակներին հասնելու և պահպանելու համար Զ3. Հզորացնել ՎՄԽԿ՝ զուգակցելով ներառական մոտեցումներին Զ4. Ներգրավել մասնավոր հատվածին աջակցելու կրթությանը</p>

<p>միջամտությունների փաթեթ սովորողների տարբեր խմբերի համար</p>	<p>են ներառական կրթությունը որպես ողջ կրթական համակարգի փոփոխման ուղի և յուրաքանչյուր սովորող ներառված է արդյո՞ք ավելի որակյալ կրթություն ստանալու գործընթացում: 2. Ձեր երկրի քաղաքականություն ներն ունեն արդյո՞ք համակարգի զարգացման տեսլական, որը միավորում է ֆորմալ, ոչ ֆորմալ, հիմնական և սեգրեգացված կրթության տրամադրումը: 3. Այլ ոլորտներ կատարո՞ւմ են ներդրումներ կրթության մեջ (այլ նախարարություններ, մասնավոր հատված և այլն):</p>	<p>են ծախսատար գույքահեռ համակարգեր 2. Որոշակի խմբերին տրամադրվող կրթական ծառայությունները ԿԳՆ-ից դուրս են</p>	
<p>Է.Ընդգրկուն կրթական</p>	<p>Հաղորդակցություն</p>	<p>1. Կրթական</p>	<p>Է1. Նախաձեռնել հանդիպումներ աշխատակիցների հետ`</p>

<p>համակարգի համար անհրաժեշտ է տեղեկատվության սահուն հոսք տարբեր մակարդակների մասնագետների, դպրոցի և ընտանիքների միջև</p>	<p>կրթության տարբեր մակարդակների միջև</p> <p>1. Գոյություն ունի արդյո՞ք տեղեկատվության կանոնավոր փոխանակում կրթության տարբեր մակարդակների, ինչպես նաևն դպրոցների ու ծնողների միջև:</p> <p>2. Ջանքեր գործադրվել են արդյո՞ք մասնագետների միջև փորձի փոխանակումը խթանելու համար:</p>	<p>համակարգի տարբեր մակարդակների աշխատակիցների շրջանում առկա են պրոբլեմներ և թյուրըմբռնումներ՝ սկսած վաղ մանկությունից.</p> <p>2. Տեղեկատվության հոսքի բացակայություն կրթական համակարգի տարբեր մակարդակների միջև.</p> <p>3. Մի մակարդակից մյուսին անցման ժամանակ սովորողների համար շփոթեցնող են մանակավարժական մոտեցումների և դասավանդման մեթոդների փոփոխությունները:</p>	<p>քննարկելու և սահմանելու իրենց դերերն ու գործընկերության ոլորտները</p> <p>Է2. Տրամադրել տեղեկատվություն ավելի ստորին մակարդակներում իրականացված գործողությունների և ունեցած փորձի մասին</p>
---	--	---	--

Քաղաքականության մտահոգություններ	Քաղաքականության և առնչվող հարցեր	Լուծում պահանջող բացեր	Առաջարկվող գործողություններ
<p>Ը. Դպրոցական շենքերի և ուսումնական ծրագրերի մատչելիություն</p>	<p>Մատչելիություն/ հասանելիություն</p> <p>1. Դպրոցները հասանաելի են արդյո՞ք մասնավորապես հեռավոր և գյուղական վայրերում բնակվող երեխաների համար,</p> <p>2. Երիտասարդների և մեծահասակների համար կրթությունն ու վերապատրաստման ծրագրերը հասանելի և մատչելի՞ են.</p>	<p>1. Երեխաները պետք է երբեմն երկար տարածքներ քայլեն՝ դպրոց հասնելու համար.</p> <p>2. Շատ դպրոցներ չունեն թեքահարթակներ և/կամ համապատասխան սանհանգույցներ.</p> <p>3. Չկան միասնական ստանդարտներ և հրահանգներ մատչելի դպրոցներ կառուցելու համար:</p> <p>4. Ոչ մի իրավական փաստաթղթում չի նշված, որ դպրոցական շենքերը պետք է մատչելի և հասանելի լինեն բոլորի համար:</p>	<p>Ը1. Կառավարությունները, անհրաժեշտության դեպքում, պետք է տրամադրեն տրանսպորտային միջոցներ տնից դպրոց և դպրոցից տուն գնալու համար.</p> <p>Ը2. Խրախուսել դպրոցներին ինքնուրույն կառուցելու թեքահարթակներ և բարելավելու դպրոցի սանիտարական պայմանները.</p> <p>Ը3. Ապահովել խթաններ մատչելի դպրոցների շինարարության համար՝ միջոցներ հայթայթելով մասնավոր հատվածից:</p>
<p>Թ. Այնքան ուշադրություն չի դարձվում կրթության որակի բարձրացման, որքան սովորողների ներգրավման ցուցիչի և</p>	<p>Որակյալ կրթություն</p> <p>1. Ձեր երկրի քաղաքականությունները հիմնված են այն ընկալման վրա,</p>	<p>1. Դպրոցից դուրս մնալու և նույն դասարանի ծրագիրը կրկնելու բարձր ցուցանիշ.</p>	<p>Թ1. Կիրառել մեթոդներ ուսուցման արդյունքները գնահատելու համար.</p> <p>Թ2. Բարելավել դասավանդման մեթոդները.</p> <p>Թ3. Հաշվի առնել ճանաչումն ու ճանաչողական զարգացումը.</p> <p>Թ4. Ապահովել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:</p>

<p>մատչելիության բարձրացման վրա</p>	<p>որ մատչելիության բարելավումը պետք է փոխկապակցված լինի որակի բարելավման հետ՝ աշակերտների ներգրավման ցուցիչի պահպանման և դպրոցից դուրս մնալը կրճատելու համար:</p>	<p>2. Ուսուցման արդյունքներն անբավարար են:</p>	
<p>Ժ. Ուսումնական ծրագրերի բարեփոխումները պետք է ավելի տեսանելի լինեն՝ նոր և փոփոխվող ծրագրերում ներգրավելով համապատասխան շահագրգիռ կողմերի</p>	<p>Ճկուն ուսումնական ծրագրերի մշակում 1. Ձեր երկրի քաղաքականությունները խրախուսում են շահագրգիռների ներդրման վրա հիմնված ծրագրային բարեփոխումներ: 2. Քաղաքականություններն աջակցում են տեղերում ուսումնական ծրագրերի մշակման ճկունությանը:</p>	<p>1. Ուսումնական ծրագիրը կենտրոնացած է ակադեմիական հմտությունների և դրանց գնահատման վրա. 2. Կիրառվող մեթոդները ճկուն չեն և դասավանդման մեկ ոճով. 3. Ծրագրում համայնքի հետ կապ և համագործակցություն նախատեսված չէ. 4. Ուսումնական</p>	<p>Ժ1. Հարկ եղած դեպքում, տրամադրել աջակցություն և ծրագիրը դարձնել բաց և ճկուն՝ թույլ տալով ուսումնառության տարբեր ոճերի և բովանդակության կիրառում՝ համապատասխանեցնելով ծրագիրը սովորողներին և հասրակությանը Ժ2. Ներգրավել տեղական համայնքներին՝ ուսուցումը տեղիլեզվով կազմակերպելու համար Ժ3. Վաղ մանկության հարցերը ներառել ծրագրում՝ սահուն անցումն ապահովելու համար Ժ4. Ապահովել, որ ուսումնական ծրագրերը չկենտրոնանան միայն ակադեմիական հմտությունների վրա Ժ5. Խրախուսել ուսումնառության մոր մեթոդներ և հնարներ Ժ6. Դպրոցներում նախաձեռնել քննարկումներ ուսուցման և ուսումնառության գործընթացների վերաբերյալ</p>

		<p>ծրագրերը հրահանգող են և ոչ-ճկուն:</p>	
<p>Ի.Ուսուցիչների կրթությունը հաճախ մանրամասն քննարկվում է, բայց ոչբազմազանությունը խթանելու համատեքստում</p>	<p>Ուսուցիչների կրթությունը 1. Ձեր երկրի քաղաքականությունները խրախուսում են մանկավարժական կրթական ծրագրերի ռադիկալ բարեփոխումներ, (թե ԲՈԻՀ-երում ուսանողների համար, թե գործող ուսուցիչների համար) ներառական մոտեցումներով ուսուցիչներ պատրաստելու համար: 2. խրախուսվում են արյո՞ք Ներառական կրթության մոտեցումները, որպես յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքի</p>	<p>1. Ուսուցիչների մասնագիտական զարգացման խթանների բացակայություն 2. Ուսումնառության անբավարար միջոցներ՝ դասագրքեր, նյութեր 3. Որոշակի խմբի կարիքներին արձագանքող նյութերի/սարքերի բացակայություն՝ բարայլ, ժեստերի լեզու, խոսող գրքեր 4. Մայրելի լոզվով հրահանգների բացակայություն 5. Գենդերազգայուն և գենդերին արձագանքող մոտեցումների բացակայություն 6. Ուսուցիչները չեն ողջունում բազմազանությունը,</p>	<p>Ի1. Բարելավել ԲՈԻՀ-ական և ներ դպրոցական կրթությունը, մենթորությունն ու թիմերի կառուցումը Ի2. Խրախուսել ուսուցման նոր և այլընտրանքային մեթոդների կիրառումը Ի3. Խրախուսել անհատական ուսուցման կարիքների վրա հիմնված կրթության պլանավորման մեթոդներ Ի4. Խրախուսել ուսուցիչներին աշխատել թիմերով և կիրառել պրոբլեմի վրա կենտրոնացած ուսուցման մեթոդներ: Հարգանքով վերաբերվել աշակերտների բազմազանության և ուսումնառության տարբեր ոճերի հանդեպ Ի5. Կազմակերպել խառը կարողություններ ունեցող երեխաների խմբային աշխատանք՝ խթանելու հասակակիցների մեկը մյուսին ուսուցանելու հնարը Ի6. Խրախուսել նոր տեխնոլոգիաների և SUZ-երի կիրառումը</p>

	<p>բնականոն ձևաչափ: 3. Հարց տրվում է, թե ովքեր են վերապատրաստում ուսուցիչներին: Անդրադարձ արվում է այն զգայուն հարցին, որ ուսուցիչների վերապատրաստման կայացած հաստատություններն հնացած մոտեցումներ են կիրառում:</p> <p>4. Քաղաքականությունները ընդունում են, որ երեխաների, երիտասարդների և մեծահասակների տարբեր կարիքներից ելնելով, պետք է օգտագործել տարբերակված մանկավարժական մեթոդներ և հնարներ:</p>	<p>այլ այն դիտարկում են որպես պրոբլեմ 7. Ուսուցիչները դեռևս լավ ծանոթ չեն ՏՀՏ-ին</p>	
<p>Լ. Կարողությունների զարգացումը կարևոր է կրթության համակարգի</p>	<p>Կարողությունների զարգացում 1. Կարևորվում է</p>	<p>1. Չկա կառուցվածքային պլանավորում</p>	<p>Լ1. Նախաձեռնել կրթության ոլորտի աշխատակիցների կարողությունների հզորացումը՝ տեղական, տարածքային և ազգային մակարդակներում:</p>

<p>բոլոր մակարդակներում</p>	<p>կարողությունների շարունակական հզորացումը ողջ համակազմի համար՝ ուսուցման որակի բարելավման նպատակով. 2. Կա՞ն հատուկ կրթական ծրագրեր դպրոցների կառավարիչների համար (տնօրեններ, ուսումնական գծով ուսմասվարներ):</p>	<p>ուսուցիչների և օժանդակ համակազմի կարողությունների հզորացման համար 2. Տնօրենների և տեսչական աշխատակիցների համար սահմանված չեն կարողությունների հզորացման հստակ պահանջներ</p>	<p>L2. Մշակել դպրոցների կառավարիչների, տեսուչների և ուսուցիչների անհրաժեշտ կարողությունների չափանիշների փաթեթ:</p>
<p>Խ. Մշտադիտարկումն ու գնահատումը անհրաժեշտ են պլանավորումն ու իրականացումը բարելավելու համար</p>	<p>Մշտադիտարկում և գնահատում 1. Սահմանված են արդյո՞ք դպրոցների և ոչ-ֆորմալ կրթության գործողությունների մշտադիտարկման և արդյունքների գնահատման հստակ ակնկալիքները. 2. Այս ամենը վերաբերում է արդյո՞ք մարզային և կենտրոնական իշխանություններ</p>	<p>1. Մշտադիտարկման և գնահատման քաղաքականության բացակայություն կամ թույլ սպասելիքներ. 2. Մշտադիտարկման կամ գնահատման համակարգի բացակայություն.</p>	<p>Խ1. Մշակել մշտադիտարկման ու գնահատման համակարգեր բոլոր մակարդակների համար (ազգային, մարզային, տեղական և մասնավոր). Խ2. Բարելավել մշտադիտարկման ու գնահատման գործընթացը դպրոցներում և ոչ-ֆորմալ կրթական ծրագրերում. Խ3. Վերապատրաստել և ներգրավել դպրոցների տնօրեններին ու տեսուչներին մշտադիտարկման ու գնահատման գործընթացում. Խ4. Կրթությունից դուրս մնալու ռիսկի ենթակա երեխաների վաղ հայտնաբերումն ու այդ իրավիճակի գործոնների և պայմանների վերլուծությունը պետք լինի գնահատման ողջ գործընթացի մաս:</p>

	ին. 3. Մասնավոր հատվածը մասնակցում է արդյո՞ք մշտադի- տարկման ու գնահատման գործընթացին:		
--	---	--	--